


84  
U-26



90

ՎԻԿՏՈՐԻԵՆ ՍՈՐԳՈՒ

ՈԳԵՅԱՐՑՈՒԹԻՒՆ

(SPIRITISME)

ԹԱՏԵՐԳ. ԵՐԵԲ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ



Թիմիս «ՀԵՐՄՈՒ» Տպարան.

1905.

84  
U-26

20 APR 2006

N: 9320

ՎԻԿԱՐԻԻՆ ՍԱՐԴՈՒՈԳԵՎԱՐՑՈՒԹԻՒՆ

## (S P I R I T I S M E)

ԹԱՏԵՐԻ. ԵՐԵՎԱՆ ԱՐՄԱՆԻԱՆ



Թարգմ. Լ. ՄԵԼԻՔ-Ա. ԽՈՄԵՆՅԱՅ



Թարգմանած եմ եւ պատրաստու իշխանութիւնից ել վաղուց բայլաբուած են իսկառու և նաև հիշեալ պիկաները.

Թարգմանից՝

1. էմիլ Օժիկ. «Երկու գեղասահ» կամ «Յուրշամբուաֆ» (Les Fourchambault), կատակերպութիւն 5 արարուածով:
2. էմիլ Օժիկ և Ժիլ Սանդո. «Պարոն Պուտափի վիսան» (Le Cendre de M. Poirier), կատակերպ. 4 արարուածով:

Թարգմանից՝

3. ա. Վայդիմիրովա. «Թատազուրկ կիճը» (Բեզպահայ), ողբերգութիւն 5 արար.
4. ա. Նազարովա. «Օսարը» (Կոյայ), - թատերգութիւն 3 արարուածով:
5. ա. Բուլացել. «Կիճը երեւ ուզենայ, իւ ասածը կ'անիչ», վօդ. 1 արարուածով:
6. ? «Չուխս ոսեով բակարի մեջ», կատակերպ. 3 արարուածով:

Ծուռով պատրաստ կը լինի Արքիւր Շնիդերի 3 արարուածով «Հեմեր» կատակերպութիւնը:

Վերոյիշեաները ձեռք բերել ցանկացող ները պէտք է դիմեն ինձ՝

Տիֆլոս, Օբելանովսկայ ա. Ն. № 24.

Լևոն Վարդան Մելիք-Աճամյան

Թիվ 1904

Զարգրության և Սպառաւան փող. № 15.

(58)

29 JUL 2013

7213

ՀԱՅՈՂՈՎԻՐԱՐԱ

(ՄԱԼԻՔ)

Дозволено цензурою, Тифлисъ, 13-го Октября 1904 года.

ԵՂԲԱԶՐԱԿԱՆ

ՆՈԽԵՐ

ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՑԵՐՆ

ԹԱՐԳՄԱՆՈՂԻՑ



(13-96)

2252-99



## Ո Գ Ե Հ Ա Ր Յ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Զ Ի Ն Ք

Ալբերտո Դ'Օբենաս.

Սիմի, նրա կինը.

Դելֆին, Սիմիի մօրաքրոջ աղջկը.  
Ժօրժ Դ'Օբենաս.

Թէկդի, Սիմիի ընկերուհին.

Դոկտօր Պարիզօս, ոգեմիջնորդ (*մի-  
դիում*).

Դոկտօր Պարիզօն, հիւր.

Վայենտին Կաւիկ, հիւր.

Մայմօնդ, նրա կինը.

Մարեսկօ, հիւր.

Ժիլբերտ, նրա կինը.

Միհայլ Սոնձա, ոռոմինացի.

Դեզօբիէ, հիւր.

Ֆիլիպ, Միքայէլի ծառան.

Եվօնիս, Դ'Օբենասների աղախինը:

# ՈԳԵՀԱՐՑՈՒԹԻՒՆ

## ԱՐԱՐՈՒԱԺ ԱԹԱԶԻՆ

Վարագոյքը բարձրանալիս բեմը ներկայացնում  
է Դ'Օրենսախ խաղային կացարանի շեն  
հիւրատեսնակը, որի կամարաձև լայն դռնե-  
րը հայում են ձեմկիցին, որից դեմքը ծառե  
և երեւում: Դուների աշ ու ճախ կողմերում  
լուսաւուսներ: Աչ կողմամ լուսաւուս՝ վա-  
րագյուղ ծածկած, ճախում՝ կացարանի  
ներկրը տանող դուռը: Ծուաշին զծի վրայ  
երկու փոքրիկ սեղամ, մօտեներ Օրոսներ և  
բազիարուներ: Մենակի մեջտեղը՝ զանա-  
զան ձևամ ծաղիկներ: Ամեն կողմը եւս զի-  
ղեցիկ կահ-կարասիք: Աչ կողմում, ճուածեւ  
մի մեծ սեղանի շուրջը նստած են Թեկ-  
դին, Դ'Օրենսաք, Վալենտին Կրափերը:  
Խորում, ձեմելիբում, կանգնած են զօկք:  
Պարփօքը, Տ. Ռայմօնը, Մարենիօն:

## ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԹԵԿՂԻ, ԴՕԲԵՆԱՄ, ԿԱՍԻՒՔՐ, ՌԱՅ-  
ՄՈՆԴ, ԴԿԸ, ՊԱՐԻԶՈՏ, ՄԱՐԵՍԿՈ  
ԺԻԼԵՐՏ, ԴԵԼՖԻՆ եւ ԺՈՐԺ.

ԹԵԿ. Ես միշտ հաւատացել եմ ոգե-  
հարցութեան—սպիրիտիզմին:

ԴՕԲ. Ոգեհարցութիւնը — սպիրի-  
տիզմը՝ ինձ համար համարեա թէ կրօնք  
է: Հաւատում եմ որ մերկացումներ  
եղած են, որպինուկ մարդիկ միշտ բա-  
ժանուած են եղել՝ իսկական մարդա-  
րէների և խարերաների...

ԿԼ. Սակայն սպասեցէք, սպասեցէք.  
ՀՀ-որ ամեն բանի ևս պէտք է քննա-  
կան կերպով վերաբերուել:

ԹԵԿ. Ուր քննութիւն կայ, այսուղ  
այլևս չի կարող հաւատ լինել:

ՌԱՅ. (Նստած տեղից:) ԹԵԿՂԻ, ԿԹԷ  
ԴՊՈՒՔ ՎԵՃ էք սկսել ամուսնուս հետ,  
յայն դէպս պէտք է ասեմ որ այդ ան-  
օգուտ բան է, որովհետև նա վիճում  
է սկզբունքից դրդուած՝ որպէսզի եր-  
բէք չհամաձայնուի:

ԺՈՐ. (Ծիծաղիլով:) Հա, հա, հա...

Ամուսնական կեանքում այդ լաւ ոկրպ-  
բունք է:

ԿԼ. (Նոյնպիս ծիծաղիլով:) Հա, հա,  
հա... Ահա նկատողութեանդ անսպասե-  
լի հետեանքը:

ԴՕԲ. Թռյլ տուէք՝ մի դէպք պատ-  
մեմ ձեզ, որ ինձ ստիպեց անպայման  
հաւատալ ոգեհարցութեան:

ԱՄԵՆՔԸ. Պատմեցէք, խնդրում ենք,  
պատմեցէք:

ԴՕԲ. Դուք ևս լաւ գիտէք որ նախ  
քան նշանուելս Սիմբին երբէք չէի տե-  
սած, մինչև անգամ չէի էլ կարծում,  
թէ այդ չքնաղ աղջիկն ապրում է աշ-  
խարհիս երեսին... Այս բանը պատա-  
հեց օրիցս չոլս տարի առաջ... Այս,  
երեք տարի է մեր ամուսնանալը: Բո-  
լորովին պատահաբար ես ներկայ ե-  
ղայ մի տան մէջ կատարուող ոգեհար-  
ցութեան փորձին: Այդ առաջին փորձն  
էք, որին ես ներկայ էի լինում: Այն  
ժամանակ ես ոչ-միայն չէի հաւատում,  
այլ տրամադիր էլ չէի հաւատալու որևէ  
անյայտ բանի: Մեղիսումը—ոգեմիջնոր-  
դը մեր յայտնի գօկտօր Պարիզուն  
էր...

ՊԱՐ. Օ՛, ԲՆՀ Հարկ կայ անունը յիշելու:

Դ'ՕԲ. Դօկտօր, չչո-որ մինչև օրս ես ոչինչ չեմ ասել, բայց քանի-որ սրանք հիմա այսպէս յարձակվում են սպիրիտիզմի վրայ, ես անկարող եմ ծածկել մի այնպիսի անսովոր գէպք: Ուրեմն այդպէս՝ բոլոր ներկայ եղողներդ գիտէք դօկտօր Պարիզօտի ոգեմիջնորդական ոյժը. Առաջին փորձին ես ականատես եղայ մի ամբողջ շարք թէկ զարմանալի, բայց և այնպէս սովորական երկոյթների: Դօկտօր Պարիզօտը, երկի նկատելով կասկածոտութիւնս, հարցրեց ինձ. « Արդեօք չչիք կամենալ տեսնել այն անձնաւորութիւնը, որ ահազին դեր պէտք է խաղայ ձեր կեանքի մէջ»: Ես պատասխանեցի՝ մեծ ուրախութեամբ... Եւ մէկ-էլ յանկարծ բոլորովին մութը սենեակի մի անկիւնում մի տեսակ կապտաւոն լոյս երեւաց, յետոյ մի ինչ-որ անորոշ, ոսկիտակ բան և ես՝ ի զարմանս իմ, ոկտեցի զանազանել երեսի գծերը, ոսկեգոյն մազերը և մի բոպէաչափ պարզ նկարուեց մի փոքրիկ չքնաղ երես, եր-

կու խոշոր աչեր, որոնք ինձ էին նայում և... բոլորը չքացաւ:

Թէկ. Ո՞րտեղ էր այդ փորձը:

Դ'ՕԲ. Այդ փորձը եղաւ քաղաքից դուրս, Հովարդենց որսորդական փոքրիկ տան մէջ:

Դէկ. Արդեօք այդ այն փոքրիկ տունը չէ, որ յետոյ նրանցից գնեցիք:

Դ'ՕԲ. Այն, հէնց այն է: Մի ամսից յետոյ երբ Հովարդենց մօտ հանդիպեցի Սիմիին, զարմանքից քիչ մնաց խելքս թոցնէի: Այդ նաև էր: (Ընկենալ մտածման մէջ) Հարսանիքից յետոյ մեր կեանքի ամենալաւ մասը այդ փոքրիկ տան մէջ անցկացրինք:

Ժիկ. Ինչո՞ւ չէք գնում այստեղ. զարսանը հիանալի է լինում:

Դ'ՕԲ. Չեմ սիրում մենակ գնալ:

Դէկ. Ի՞նչպէս-թէ մենակ. հապա Սիմին:

Թէկ. Ես ու Սիմին ամարային սեղօնին Լօնգօն ենք գնալու, այդ արդէն վաղուց է վճռուած:

ԺՕԲ. Եւ դու թողնում ես որ Սիմին գնայ:

Դ'ՕԲ. Զարմանալի՛ հարց:

Փօրդք Դելֆինի ականջին քան է  
փսխում, նա էլ ծիծաղում է:  
Դ'ՕԲ. Այդ խելառն ի՞նչ կարող էր ա-  
սել ձեզ որ այդպէս ծիծաղում էք...  
Ափսն որ Սիմին այստեղ չէ:

ԺԻԼ. Ի դէպ. ուր է նա:  
ԺՈՐ. Ստօնձային ցոյց է տալիս իր  
նոր գաշնամուրը և նա էլ, երկի, յան-  
պատրաստից երգում է:

Դ'ՕԲ. Դելֆին, ինչու էիր ծիծաղում:  
ԺԻԼ. (Ամօրխած:) Ժօրժն ասում էք...

Դ'ՕԲ. Նրա բոլոր արտասովոր վար-  
մունքների մէջ, երկի, այդ ամենասար-  
սափելին չէ. բայց եթէ գուք սկսէք  
լուռ մնալ, այն-ժամանակ, ուղիղն ա-  
սեմ, որևէ սոսկալի բան պիտի մտածեմ:

ԺՈՐ. Ես կ'ազատեմ մօրիրի սիրելի  
աղջկան ինձ մատնելու սոսկումից. չէ-  
որ նա ինձանից վախենում է:

ԺԻԼ. Ժօրժ... ի՞նչպէս էք համարձակ-  
վում: (Տեղից վեր բռչելով վազում է  
Դ'Օբենախ մօս.) Դ'Օբենաս, նա ա-  
սում է ողիներն արգելել ին ձեզ խան-  
դուտ լինել:

Բոլորենեան ծիծաղում են,

Դ'ՕԲ. Խելօք բան չես ասել, Ժօրժ.

այստեղ ոգիներն ամենեին գործ չու-  
նեն: Իմ սեպ:ական խորին համոզմունքս  
է որ խանգը անարժան զգացմունք  
է և յատուկ միմիայն ստորին բնաւո-  
րութիւններին:

ԺԻԼ. (Ձեռքիրավ տիանութիւն է ցոյց  
տալիս) Ես չեմ ուզում բարձր բնաւո-  
րութեամբ ամուսին:

ԺՈՐ. Սիրելի Դելֆին, սքանչելի՛ էք:  
Ուրեմն գուք կամենում էք որ ձեր  
ամուսինը խանգոտ լինէր:

ԺԻԼ. Սարսափելի կերպով, խելագա-  
րի պէս, միշտ և ամենքի վերաբերմամբ:

ՊԱՐ. Բայց չէ-որ խանգը ժխտում  
է վստահութիւնը:

ԺԻԼ. (Դարձարձիկ—պիրուես անելով,  
գնում է իր տեղիք:) Եւ թող վստահ չը-  
լինի...թող չնաւատանց...Եթէ նա երկիւղ  
ունենայ որ կարող եմ իրան սիրելուց  
դադարել, այն-ժամանակ շարունակ մօ-  
տըս կը-լինի... (Հանդիսաւոր կերպով  
նսկելով:) պրծաւ-գնաց:

Դ'ՕԲ. Ես երբ էք չեմ նախանձում Սի-  
միին. նա բոլորովին ազատ է անելու՝  
ի՞նչ-որ կամենայ:

## ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ՄԻՄԻ ԵՒ ՍՏՕՆՉԱ

**ՄիՄ.** (Թերեւ սեւ հագուստով, մազերի մէջ եւ գօսկում թարմ ծաղիկներ. ամուսնունք.) Ալբերտո, նոր դաշնամուրը հիանալի՛ է հնչում: (Միւսներին:) Ես ձեզ թողի-գնաց, ինդրում եմ ներէք: Դուք արդէն գիտէք որ ես միշտ յափշտակ-վում եմ երածշտութեամբ: Դոկտօր Պարիզոս, եթէ ձեր ոգիները ևս կարողանային գոնէ կիսով չափ այնպէս նուագել, ինչպէս-որ Ստօնձան է նուագում, այն-ժամանակ ամենից շատ ես կը հաւատայի ոգիների զօրութեան: (Նսելով փոքրիկ սեղանի մօսի արռոփ վրայի:) Ի՞նչի՞ մասին էիր խօսում:

**ԹԵԿ.** Մեր կօնդօն գնալու և ամուսինների խանդուտութեան մասին:

**ՄիՄ.** (Նփորուելով:) Զեմ հասկանում, թէ դրանք ի՞նչ կապ ունեն իրար հետ:

**ԹԵԿ.** Հարցըրն մօրաքրոջդ աղջկան:

**ՄիՄ.** (Զարմանելով:) Դեղինի՞ն:

**ԹԵԿ.** (Նսած սեղից ձեռքերով բացասկան նշաններ և անում:) Ի՞նձ չէ, ի՞նձ

չէ. ինձական ոչինչ չկայ.... Այդ ամենը ժօրժի հնարած բաներն են:

**ԺՈԲ.** Հնարած բաներ... Հիանալի՛ խօսք... իսկոյն երկում է, որ գեռ գիշերօթիկ գալրոցի գրականութեան աղցեցութեան տակ էք գտնվում:

**Դ'ՕԲ.** (Մօսենալով կնոջը եւ համբուրելով նրա ձեռքի:) Զարժէ հարցուափորձ անել. խանդն ու ես՝ իրար չենք ընկնում: Կարծում եմ որ դու վախենալու բան չունես այդ զգացմունքից:

**ՄիՄ.** (Նայում է ամուսնու աշխերին եւ ծիծաղում:) Ո՞, այն, ի հարկէ. դու ընդունակ չես ոչ մի անմտութեան:

**Դ'ՕԲ.** (Հեռանալով:) Ո՞չ մի... Հանգստութիւնը՝ բաղդաւորութեան նըշշան է:

**ԺԻԼ.** (Վերկենալով:) Ի՞նչպէս լաւ է այժմ այգին: Պարոններ, եկէք-գնանք:

Դուրս է զնում նեմելիք. բացի թեկլիից, Սօնձալիից, Սիսիից ու Դ'Օբենասից միւսները նետեւում են նրան:

## ՏԵՍԻԼ Դ

ԹԵԿՂԻ, ՍՏՕՆՉԱ, ՍԻՄԻ ԵՒ  
ԴՐԵՆԱՍՍ.

ԹԵԿ. և ՍՏ. (մօհենալով լուսամտին,  
ցածր ձայնով խօսում են:)

Դ'ՕԲ. Գնդում ես, Սիմի:

ՍԻՄ. Այս, ի հարկէ. միթէ այդ ար-  
դէն վճռուած չէ:

Դ'ՕԲ. Թեկղիի հետ:

ՍԻՄ. Ի՞նչ զարմանալի հարց է... կար-  
ծեմ որ այդ ևս վաղուց յայտնի էր քեզ:

Դ'ՕԲ. Արդեօք կարծդ եմ ճանապարհ  
զցելքեզ երկաթուղով՝ գոնէ մինչեւ Կալէ:

ՍԻՄ. Աւելի լաւ է որ ուղղակի ա-  
սեմ՝ Սիմի, միա: (Վեր և կենում:) Առ-  
հասարակ այս ամենը ինձ համար ան-  
հասկանալի և... միքիչ էլ աւելորդ խօ-  
սակցութիւն է:

Դ'ՕԲ. Դու կ'անես այնպէս, ինչպէս-  
որ կամենում ես. ես միայն հարցրի:

ՍԻՄ. Բայց հէնց այդ հարցդ ինձ հա-  
ճելի չէ. այդ ամենեփն նման չէ մեր  
յարաբերութիւններինք.. Դու միշտ չէ  
հանգիստ էր:

ՀԱՅՐԱ

ԱՐԱ



Դ'ՕԲ. Ես հէնց հիմա էլ համարուս եմ  
ձեմելիքից խվում և ժօրժ անոնք

«Ալբերտօ, Սիմի, եկէք այստեղ»:

ՍԻՄ. (Հնչիւն ձայնով:) Իսկոյն կը-  
դամ: (Ամուսնունի:) Ժօրժը կանչում է.  
դու զնա, ես պէտք է թեկղիին մի-եր-  
կու խօսք ասեմ:

Նորից Ժօրժի ձայնը «Ալբերտօ»:

Դ'ՕԲ. (Ժօրժին:) Գալիս եմ:

Դուրս և գնում:

## ՏԵՍԻԼ Դ

ՍԻՄԻ, ԹԵԿՂԻ ԵՒ ՍՏՕՆՉԱ

ՍԻՄ. (Արագ մօհենալով:) Ի՞նչ է պա-  
տահել Ալբերտօին: Ես չեմ ճանաչում  
նրան, առաջին անգամն է որ նրա  
ձայնի մէջ մի ինչ-որ անհանգստու-  
թիւն է նկատվում: Երևակայիր, նա  
առաջարկեց՝ մեզ ճանապարհ գցել մին-  
չև Կալէ:

ՍՏ. Եւ դուք թոյլ տուիք:

ՍԻՄ. (Յիթաղելով) Ի հարկէ:

ՍՏ. (Յուսահատչ) ԱՌՈՅ մահուանս  
դատավճիռն էք ստորագրել:

ԳՐԱԴԱ

Թիկ. Դէ, հերիք. ինչ երեխան էք.  
միթէ չէք տեսնում որ նա ծիծաղում է:

Ս. Այս ճանապահնուելուցն է կախուած իմ ամբողջ կեանքս: Ես ասում էի ձեզ՝ ինձանով միք խաղալ:

Զետերով ծածկում է աշխերը:

ՄԻՄ. (Յուզուելով:) Թեկդին իրաւունք ունէր՝ ձեզ երեխայ անուանելու:

Դեկ. (Ճեմելիքից:) Սիմի, դէ արի. գոկտորը կամենում է լուսնեակի լուսով մի երեոյթ ցոյց տալ մեզ:

ՄԻՄ. (Քօտիկից մի վարդ հանելով:) Կարելի է թէ այս միթմարի ձեզ:

Ծաղիկը երբ տալիս է Ստոնձային, վերջինս ըսապով համբուրում է նրա ձեռքը եթե ես տանելիս եւ դուրս գնում:

### ՏԵՍԻԼ Ե

#### ԱՅՕՆՉԱ և ԹԵԿՂԻ

Մ. (Թեկդիի ձեռքը բռնելով:) Ուրեմն այդպէս՝ այսօր, մի ժամից յետոյ գնալու էք: Արդէն վաղուց է, որ երկու սենեակ եմ վարձեկ՝ ուղիղ երակաթուղու կայարանի դիմաց. իմ ծա-

ռայ Ֆիլիպն այսօր ծաղիկներով գարդարել էր և հիմա ձեզ է սպասում:

ԹԵԿ. Իսկ յետոյ բոլոր կուժնուկուցն իմ գլխին է կոտրուելու... Անպատճառ ասելու են, թէ ես նպաստեցի ձեր փախուստին. մինչդեռ ես զոհում եմ ինձ և իմ բարի անունս միմիայն այն պատճառով, որ ցաւում եմ ձեզ համար և սիրում Սիմիին:

Մ. (Նետելով:) Ի դէպ. արդեօք ըստացածք այն առարկաները, որ ընտրել էք ակնավաճառի մօտ:

ԹԵԿ. (Անփոյք կերպով:) ԱՌ, այն, մատանին ու գնձիկը: Դրանց համար մրբան էք վճարել:

Մ. Դատարկ բան է, յետոյ կը հաշուենք. մինչև անգամ չեմ էլ յիշում: Ուրեմն այդպէս՝ գուր կը-լինէք ճանապարհորդական միատեսակ հագուստով:

ԹԵԿ. Այսինքն ճանապարհորդական միատեսակ հագուստով կը-լինենք մինք երեքս միասին, այն է՝ Սիմին, ես և իմ աղախին լիւսիէտը: Այնպէս արէք, որ ծածկած կառը կանգնած լինի բոլորովին կայարանի մօտ: Դուք նրանով կ'երթաք լիւսիէտի հետ և երբ ես

ու Սիմին մօտենանք կառքին, պէտք է փոփոխութիւն լինի. Սիմին կը-մտնի կառքի մէջ, իսկ Լիւսիէտը՝ թանձր քօղով դուրս գալով նրա միջից, կը-գայ ինձ հետ: Բայց դուք երդմամբ խօսք տուէք ինձ որ երեք օրից յետոյ կը-գաք Լօնդոն, վասնզի ինձ չի յաջողութիւն երկար միջոց ծածկել: Լաւ, առենք՝ առաջին օրերը նամակ կը-գրեմ և կ'ասեմ, թէ Սիմին միքիչ քէֆ չունի. իսկ յետո՞յ... Զէ-որ այստեղ կըսկսեն անհանգստանալ:

ՍՏ. Խօսք եմ տալիս: Միայն-թէ շնուրով, շնուրով գնայիք այստեղից:

ԹԵԿ. Միայն-թէ կայարանի մօտ ոչինչ չպատահէր մեզ:

ՍՏ. Ամեն ինչ կախուած է այն բանից, թէ որքան խելացի և անձուէր է ձեզ աղախինդ: Արդեօք նա կարող է Սիմիի գերը խաղալ:

ԹԻԿ. Այդ մասին անհանգիստ միք լինիլ. նա ու Սիմին արտաքինով նման են իրար: Բայցի դրանից աղախինս անշափ երջանիկ է որ տիկնոջ գեր է խաղալու: Զէ-որ մի ամրողջ ձեռք ճանապարհորդական հազուստ է սասցել:

Սիմիինի նման. միասին պէտք է գնանք առաջին կարգով, առանձին կուպէում, և մինչև Լօնդօն օգտուելու է ճանապարհորդող օտարունու բոլոր արտօնութիւններով:

ՍՏ. Իսկ յետո՞յ:

ԹԵԿ. Յետո՞յ... նա կը-մնայ Լօնդօնում, ուր նա ազգականներ ունի, և կը-ստանայ լաւ վարձատրութիւն: Սակայն աւելի լաւ է՝ մտածէք ձեր ճանանք. այնպէս արէք որ ոսկեձկնիկը ձեռքից չփախցնէք:

Ծիծաղում է:

ՍՏ. Օ՛, միայն-թէ կարողանայի Սիմիին իմ տուն հասցնել: Երբ երկուսով միասին կը-լինինք, ահա միայն այն-ժամանակ ես կարող կը-լինիմ ամրողապէս տիրապետել նրա սրտին:

ԹԵԿ. Եւ նրա կարողութեանը:

ՍՏ. (Ձեռխով արհամարհական ժարդումն է անում:) Կարող եմ ձեզ հաւատացնել որ այստեղ դրամական հաշին ամեննեին գործ չունի: Սիմիի գեղեցկութիւնը, նրա վայելուչ հասակը, նրա նազուք շարժուածքը...

ԹԵԿ. Ի հարկէ, սակայն հօ չը կա-

բելի միջոցների վրայ ուշադրութիւն  
չդարձնել... Հա, ինչ եմ ասում. զգու-  
շացէք ժօրժից:

ՍՏ. Ժօրժից... Թնդ այդ պարոնը ճա-  
նապարհիս վրայ չկանգնի. իմ գնդակը  
դեռ ոչ մի անգամ նշանից չի վրի-  
պեր.

ԹԵԿ. Խնդիրը մենամարտութեան մէջ  
չէ, բայց նա կարող է արգելը լինել  
մեր ծրագիրն իրագործելու: Ես նրա  
համար եմ օգնում ձեզ որ սիրում եմ  
Սիմիին և կամենում եմ որ նա եր-  
ջանիկ լինի: Դուք Սիմիին սիրում եք:

ՍՏ. (Փխուն կերպով:) Ես նրան պաշ-  
տում եմ:

ԹԵԿ. Խիղճս հանգիստ կը-լինի մի-  
այն այն-ժամանակ, երբ իմանամ որ  
նա երջանիկ է:

ՍՏ. Եթէ նա ինձ սիրում է, ամուս-  
նուց կը-բաժանուի և մինք երջանիկ կը-  
լինենք:

ԹԵԿ. Ես ձեզ հաւատում եմ:

Գնում են նեմելիք. դրանց դիմա-  
ցից դուրս են զալիս ժօրժը և  
Սիսին:

## ՏԵՍԻԼ Զ

ԺՕՐԺ ԵՒ ՍԻՄԻ, կանգ առնելով դրո-  
ներում, նայում են ՍՏՕՆՉԱՅԻ ետելից:

ԺՕՐ. Ի՞նչ սիրուն տղամարդ է այդ  
ոռումինացին. կարծես քաշած պատկեր  
լինի:

ՍԻՄ. (Բարկութեամբ,) Ինչու ես ալն-  
տաղ-անում: Տաղանդաւոր մարդ, մեր  
հիւրը, օտարական... միթէ այդքանը  
բաւական չէ որ հանգիստ թողնես նրան:

ԺՕՐ. Ո՞րպիսի տաք պաշտպանու-  
թիւն:

ՍԻՄ. Ինձ այնպէս է թվում որ ու-  
զած նրա մասին խօսելը չէր: Ի՞նչո՞ւ  
համար ինձ բերիր այստեղ. ես աէտք  
է գնամ հազնուեմ:

ԺՕՐ. Ես ուզում էի խօսել քո մա-  
սին... Սիմի, չէ-որ ես չունեմ այն հան-  
գստութիւնը, որ ունի Ալբերտօն, բացի  
դրանից ես լիակատար ազատութեան  
թէօրիայի համակրողներից չեմ:

ՍԻՄ. (Բարկութիւնից պոկոսում և  
ձեռքի ծաղկի քերերը,) Ես կարծում եմ  
որ ինձ համար պարտաւորական չեն՝

՞չ ըռ թէօրիաները և ոչ էլ քո կարծիքները:

ԺՕՐ. Թողղ այդպէս լինի, բայց ես սիրում եմ քեզ... Նստիր, Սիմի:

ՍԻՄ. (Վրդովլուած:) Ես ժամանակ չունեմ:

ԺՕՐ. Հինգ րոպէ միայն. երկար չեմ պահիլ: (Սիմին նստում է:) Ես սիրում եմ քեզ, Սիմի, ինչպէս հարազատ քրոջս և դողդողում վրադ, ինչպէս Ալբերտօի պատուի և հանգստութեան վրայ: Նա իմ հօրեղօրորդին է, հարազատների պէս միասին ենք մեծացել, նա միայն միքանի տարով է ինձանից մեծ, բացի դրանից նա ինձ համար եղել է թէ հայր, և թէ խնամակալ միաժամանակ...

ՍԻՄ. Այդ ամենը ևս շատ սրտաշարժ է, ժօրժ, բայց թվում է որ այժմ այդպիսի պատմութիւնների ժամանակը չէ:

ՎԵՐ Է ԿԵՇՈՒՄ:

ԺՕՐ. (Բոնելով նրա երկու ձեռքք:) Սիմի, Թեկզիի հետ մի գնար, ես վախենում եմ ձեր այդ ճանապարհորդութիւնից. (Կամաց:) Ես նրան չեմ հաւատում:

ՍԻՄ. Ի՞նչպէս թէ չես հաւատում. ես

մինչև անգամ չեմ էլ հասկանում ասածդ:

ԺՕՐ. Ես ինքս էլ չեմ հասկանում. ահա քանի ժամանակ է՝ ես բոլորովին անընդունակ եմ դարձել քեզ հասկանալու:

ՍԻՄ. (Աշխատելով ազատուել:) Այս ոչինչ չունեմ ինձ ասելու: Խնդրում եմ բոլորովին էլ կանչես այստեղ. մնասարարովի ժամանակն է:

ԺՕՐ. (Աղաջանենավ:) Սիմի, ի՞նչ գըտար այդ մարդու մէջ: Միթէ չես տեսնում որ դա մինն է այն ստոր ու բաղդախնդիր թափառականներից, ուրոնք օտար ընտանիքների մէջ մուտք գործելով՝ որո՞նում են միայն...

ՍԻՄ. Ժօրժ...

ԺՕՐ. Այսպիսի հարուստ կանայք, որոնք միաժամութիւն ունենային հաւատալու նրանց շողոմքոր խօսքերին, նրանց կեղծ սիրոյն,

ՍԻՄ. (Զայրոյրով:) Ես այս բանը երբեք չեմ ներիլ քեզ, երբէք: (Մօտենալով նեմելիին դռներին:) Ալբերտօ, բոլորին էլ խնդրիք՝ գան այստեղ. իւ գնալու ժամանակն է: Թեկզի:

Ժօրժը գնում է դեպի լուսամուտը:

### ՏԵՍԻԼ է

ԱՄԵՆՔՆ ԷԼ ՄՏԾՈՒՄ ԵՆ ՀԻՒՐԱ-  
ՍԵՆԵԱԿ

ՍԻՄ. Թեկղի, ժամանակ է. խընդ-  
րում եմ կարգադրես, որ իրեղններս  
կառքի մէջ զնեն:

ԹԵԿ. Ես արդէն ամենքին էլ մնաս  
բարով ասացի... Յտեսութիւն, ցտե-  
սութիւն. (Գիւղով, դոների մէջ:) Ստօն-  
ձա, դուք խոստացել էք ճանապարհ  
գցելու մեզ, յիշում էք:

ՍԻՄ. Ա'խ, Տէր Աստուած, ես  
կը-կամենայի առանց որևէ ուղեկցու-  
թեան. Բնչ հարկ կայ ուրիշներին ան-  
հանգիստ անելու...

ՍՏ. Դուք շատ խիստ էք, բայց ձեր  
ընկերուհին արդէն վաղուց այդ թոյլ-  
տութիւնը տուել է ինձ. Ես կ'երթամ-  
ներքե և կը-հրամայեմ կառք բերել:

Դ'ՕԲ. Ստօնձա, յոյս ունեմ որ դուք  
մեր աիկիններին ճանապարհ գնելուց  
յետոյ կը-վերադառնաք՝ երեկոն մեղ  
հետ անցկացնելու:

ՍՏ. (Նփորուած:) Դժուար-թէ, Դ'ՕԲ-

նաս: Այսօր երեկոյեան ես պէտք է գնամ  
ծանօթիս մօտ, որին խօսք եմ տուել...

Դ'ՕԲ. Շատ ափսոս. Ես յոյս ունէի  
որ կը-գաք մեղ պատմելու, թէ մեր տի-  
կինները՝ մնալով առանց քաղցրեկէնի  
ու ծաղիկների, ինչպէս զղջում էին որ  
մեղ թոյլ չտուին իրանց ուղեկցելու:

ՍԻՄ. (Նիծալելով:) Օ՛, հաւատա՞ որ  
համակրութեան այդ արտայայտու-  
թիւնները միշտ միմիայն նեղութիւն  
են պատճառում շոգեկառքում:

ԺՈԲ. Ստօնձա, կարծեմ դուք կայա-  
րանի դիմացն էք ապրում:

ՍՏ. և ՍԻՄ. (Նայում են իրար:)

ՍՏ. Այս... այսինքն՝ այնտեղից շատ  
էլ հեռու չեմ... Այնտեղ... բարեկամնե-  
րիս... կացարանի է:

Դ'ՕԲ. Ա'խ, այս, յիշում եմ. մէկ ան-  
գամ մենք իրար մնաս-բարով ասացինք  
հէսց մուտքի դռանը. այդ ուղիդ  
կայարանի դիմացն է:

Ստօնձան սեղմում է Դ'ՕԲենասի  
ձեռքը, միւսներին մնաս-բարով  
է ասում եւ դուրս գնում:

ԱՄԵՆՔԸ. (Ճանապարհ տալով Սի-  
սիին:) Յտեսութիւն, ցտեսութիւն...

ԴԵԼ. Գնաս-բարով, Միմի. Եթէ իմ  
ապագայ ամուսինս երբեկցէ ինձ թող-  
նի որ մենակ Անդիքա գնամ, ևս այլիս  
չեմ վերադառնալ. նա հէնց այն տես-  
նելն է որ ինձ կը-տեսնի:

ՍԻՄ. Նա՝ ովոր ամուսնանայ այն-  
պիսի խելառ ու թեթևոլիկ աղջկայ  
հետ, ինչպիսին-որ դու ես, ուրիշ բանի  
էլ չպէտք է սպասի: Յտեսութիւն:

Դ'ՕԲ. (Մօսենալով Սիմին, միտսերից  
հեռու) Ուրեմն այդպէս՝ գնում ես:

ՍԻՄ. Այս երկրորդ անգամն է ինչ  
միենոյն հարցը տալիս ես ինձ: Ի հար-  
կէ գնում եմ, մինչև անգամ շտապում  
եմ: Մնաս-բարով:

Դ'ՕԲ. Մի արտասանիր այդ խօսքը...  
ես էլ չգիտեմ թէ ինչու, բայց տիսուր  
եմ:

ՍԻՄ. (Տատանման մէջ) Ալլերտո,  
այդ լեզուով դու երբէք ինձ հետ չես  
խօսեցած... Միթէ քեզ համար ես արդ-  
պէս թանգ եմ:

Դ'ՕԲ. Դու... Միմի, միթէ կարելի է  
այդպիսի բան հարցնել: Ի՞նձ տուր այդ  
ժաղիկը:

ՍԻՄ. (Գլուխ վրայից հանելով ծաղի-

կը) Մեղ են նայում և, երկի, ծիծա-  
ղում վրաներս: (Բարձր:) Ուրեմն այդ-  
պէս ցտեսութիւն: Պարոններ, ցտեսու-  
թիւն, ցտեսութիւն...

Ամենի ձեռքն ել սեղմում եւ:  
Դ'ՕԲ. Ես կ'ուղեկցեմ քեզ:

ՍԻՄ. Այս դռներից դէնը չպէտք է  
գաս. դու ինձ խօսք տուիր: Ի՞նչ կա-  
րիք կայ աւելի հեռու ուղեկցելու, ա-  
ւելորդ արտասուըներ թափելու... (Համ-  
բաւում է նրա ճակարը) Յտեսութիւն...  
Ամենքդ էլ մնացէք այստեղ, ես ամե-  
նեին չեմ սիրում հրաժեշտի տեսարանը:  
Դուրս է գնում:

## ՏԵՍԻԼ Հ

ՆՐԱՆՔ, առանց ՍիՄԻԻ, ԹԵԿՂԻԻ եւ  
ՍՏՕՆՉԱՅԻ, լեռոյ դօկտ. ԴԱՀԻԹՍՈՆ

ԴԵԼ. Ես վրգովեցուցիչ եմ համարում  
որ Սիմին ինձ հետը չտարաւ Լօնդոն:

ԺՕԲ. Դելֆին, ես ու դուք միասին  
նաւով կը-պատշենք աշխարհիս շուրջը,  
միայն այն պայմանով որ անզատճառ  
նորընտիր նաւաստիի շորեր հագնէք,

ապա-թէ-ոչ բոլոր նաւաստիներին լիել-  
քից կը հանէք:

ԴԵԼ. Չեմ ուզում: Ես կ'երթամ որ-  
պէս սպայ, իսկ գուք իրքն նորընտիր  
նաւաստի. գոնէ այն-ժամանակ, երբ  
ձեղանից անբաւական մնամ, կարող  
կը-լինեմ բանտարկել տալ: (Մօտենում  
է Դ'Օբենասին եւ ձեռքի դնում նրա  
ուսին:) Ալբերտօ, գուք կարօտ էք քա-  
շում, գուք տխուր էք, այնպէս չէ: Եթէ  
ուզում էք, ես հէնց այս բոպէիս կ'եր-  
թամ Սիմիթ ետևից և կը-համոզեմ նրան-  
յետագել գնալը:

Դ'ՕԲ. (Համբուրում է նրա զլուխը:) Ինչեր էք ասում, սիրելիս. ես ու Սի-  
մին մեր կեանքը կարգագրել ենք սկըզ-  
բունքի համեմատ, այն է—մեզանից  
իւրաքանչիւրն աղատ է՝ ուզուած ժա-  
մանակ ճանապարհորդել և ժամանակ-  
առ-ժամանակ իրարից հեռու հանգստա-  
նալ:

ԴԵԼ. Բայց այդ աղատութիւնից գուք  
երբէք չէք օգտուել:

Դ'ՕԲ. Ե՞ս, ոչ, յարմար գէտք չի ե-  
ղիլ: Սակայն Սիմին ցանկացաւ կօն-  
դոնի ամարային սեղօնը տեսնել իսկ

եռ չկամեցայ արգելք լինել նրան:

ԴԱՒ. (Ներս գալով նեմելիքի կողմից:)

Ի՞նչ հրաշալի գիշեր է. տաք, աստղալից:

ԱՄԵՆՔԸ. Դոկտօր Դաւիթոսն: (Ամեն

կողմից բացականում են: ) Բարոն ձեզ:

Վաղուց է որ եկել էք:

Դ'ՕԲ. Դոկտօր Դաւիթոսն, ինչպէս  
ուրախ եմ ձեզ տեսնելուս համար:

ԴԱՒ. (Սեղմելով նրա ձեռքի: ) Ես  
ես, ես ես: Հապա ուր է Սիմին, իմ  
հրաշալի, միշտ առողջ հիւանդա:

Դ'ՕԲ. Անշուշտ նա շատ պիտի ափ-  
սոսայ որ ձեզ չտեսաւ: Նա գնաց:

ԴԱՒ. Զքօսնելու:

Դ'ՕԲ. Ո՞-ոչ, կարձ ժամանակով մի  
փոքրիկ ճանապարհորդութիւն կատա-  
րելու դէպի կօնդոն:

ԴԱՒ. Սակայն ում հետ է գնացել.  
Ժօրժն այստեղ է, թոշնակը ևս այս-  
տեղ է... Բարոն ձեզ, թոշնակ:

Ձեռքը մեկիում է Դեֆինին:

ԴԵԼ. Ինձ հետը չտարաւ, այլ գնաց  
թեկդի հետո...

ԴԱՒ. Ամ, այդ նրա անբաժան ըն-  
կերուհին է:

Դ'ՕԲ. (Աւխատելով խօսակցութիւնը

փոխել։) Դօկտօր Դաւիթսօն, թռլլ տուէք  
ներկայացնել ձեզ իմ բարեկամ՝ նշանաւ-  
որ ոգեմիջնորդ գօկտօր Պարիզօտին։

ԴԱԻ. (Սեղմելով Պարիզօտի ձեռքի։)  
Շատ ուրախ եմ հետներդ ծանօթանա-  
լու, միայն-թէ ես ամենավոքը չափով  
անգամ չեմ հաւատում ոգեհարցութեան։

ԿԼԱԻ. Մեր զորագունդն ստուարա-  
ցաւ... ես ձեր կողմն եմ, գօկտօր։

ՌԱՅ. Ա՛խ, ի՞նչպէս կը-կամենայի,  
գոնէ մի որևէ փորձ տեսնել։

ԺԵԼ. Ես ես։

ԴԵԶ. Եթէ-միայն գօկտօր Պարիզօտը  
չմերժի՝ մի փոքրիկ փորձ ցոյց տալ մեզ։

ԴԵԼ. Օ՛, այն, հէնց հիմա, այստեղ...  
Ի՞նչպէս ուրախ և թէ սարսափելի կը  
լինի այդ։

ՊԱՐ. (Դաւիթսօնին։) Դօկտօր, խընդ-  
րեմ ասէք, թէ ի՞նչ հիման վրայ չէք  
հաւատում ոգեհարցութեան։

ԴԱԻ. Ի՞նչպէս ասեմ ձեզ. զուցէ այն  
պատճառով որ մինչև այժմ ոչ մի  
պարզ ու որոշակի բան չեմ տեսած.  
այլ միշտ էլ միենոյն երեսյթներն են  
տեղի ունենում, այն է՝ զանգակիկներ  
են թռչկոտում, սեղաններ՝ վեր-վեր

բարձրանում... Դօկտօր, համաձայնեւ-  
ցէք որ այդ բաները ձանձրալի են։ Բացի  
դրանից՝ խելքում չի նստում որ այդ-  
պիսի անսովոր ոյժի տէր մի մարդ  
իր այդպիսի ոյժը գործ դնի միտիայն  
այն բանի վրայ որ անշունչ առարկա-  
ները տեղներից բարձրանան, շար-  
ժուեն...։

ՊԱՐ. Սակայն սպասեցէք. գուք հօ-  
չէք կարող այնպէս անել որ ծանր  
սեղանը աննիւթականանայ, այսինքն  
իր քաշն ու անշարժութիւնը կորցնի,  
որպէսզի դուք նրան ստիպէք ման գալ  
սենեակի մէջ, կամ տեղից բարձրանալ  
այն-ինչ ոգեհարցը կարող է այդ բա-  
ներն անել։

ԴԱԻ. Այն, ես չեմ կարող և իսկի  
չեի էլ պարապիլ այդպիսի բաներով։  
Եթէ ես կարողանայի ներշնչումներ ա-  
նել մարդկանց... Օ՛, ինչքան բարիք  
կը-գործէի, որքան լաւ-լաւ բաներ կ'ա-  
նէի յօգուտ մարդկութեան. բացի զըրա-  
նից՝ աւելի հարուստ կը-լինէի, քան-որ  
այժմ եմ։ (Ծիծալում է.) Հա, հա, հա...  
իսկ դուք ձեր ոյժը գործ էք դնում  
չնչին ու ոչինչ բաների վրայ, ահա այդ։

է պատճառը որ ձեզ չեմ հաւատում:  
Դ'օք. Պարիզոտ, խնդրում եմ ձեզ,  
եկէք հէնց այս բոպէիս մի փորձ ա-  
նենք. ևս մի առանձին ոգևորութիւն  
եմ զգում:

ԱՄԵՆՔԸ. (Նրջապատում են Պարի-  
զոֆին.) Դոկտօր, յատուկ խնդրում ենք,  
միք մերժիլ:

ԴԵԼ. Դոկտօր, աղաջում եմ ձեզ. ահա  
հէնց այստեղ, այս սեղանի մօտ... ի՞նչ  
պէտք է անել. ճրագները հանդցնիլ:

ԺՕԲ. Դոկտօր Պարիզոտ, Ալբերտօին  
հանգստացրէք. նրան ցնյց տուէք Սի-  
միին՝ շոգեկառքում հանգիստ գնալիս:

ՊԱՐ. Ես ոչինչ չեմ կարող խոստա-  
նալ, վասնզի ես չդիտեմ, թէ ոգին  
ինչ է ասելու. սակայն համաձայն եմ  
փորձ անելու: Խնդրում եմ, դօկտօր  
Դաւիթսօն, չմիք կամենալ կողքիս նըս-  
տել. այ, հէնց այստեղ:

Ցոյց է տալիս մեծ սեղանը:

ԴԱԻ. Շնորհակալ եմ, աւելի լաւ է՝  
ես մի կողմը մնամ: Սպիրիտիզմի այր-  
բնի հետ ինքս էլ ծանօթ եմ. ևս կը-  
զրեմ հարուածները, իսկ յետոյ կը-կար-  
դանք, թէ ինչ էր ասում ոգին:

ՊԱՐ. Պարոներ, նստեցէք, իսկ միւս-  
ներդ միքիչ ետք քաշուեցէք դէպի մի  
կողմը: (Սեղանի մօս նստում է Դելֆինը,  
Ժօրժը, Ռայմոնը, Դ'Օբեանար եւ Պա-  
րիզօսը, որոնք կոնարունուկ մի ըղբայ  
են կազմում:) Պարոներ, սեղանի մի  
հարուածը նշան է, թէ ոգին ներկայ է,  
երկու հարուածը՝ թէ նա համաձայն է  
պատասխանելու, երեքը՝ լոյսը պակա-  
սացնելու, չորսը՝ աւելացնելու: Սկսենք:

ԲՈՂԻՆ ԷԼ նստում են:

Դ'ՕԲ. Սեղանն սկսում է տատանուել:  
ԴԵԼ. Օ՛, այս, նա դողում է:  
ԺԱՅ. (Սարսափով:) Թհէքվում է:

Սեղանը թեկվում է նրա կողմը, յե-  
տոյ ծանր-ծանր բաղխում ուներով:

Դ'ՕԲ. Պարիզոտ, հարցրէք:

ՊԱՐ. Արդեօք ոգին ներկայ է այս-  
տեղ:

Սեղանը բաղխում է մի անգամ:  
ԱՄԵՆՔԸ. Ներկայ է:

ՊԱՐ. Արդեօք նա խօսելու է:

Սեղանը բաղխում է երեք անգամ:

Դ'ՕԲ. Լոյսը պակասացրէք:

Ժիլբերտը հանգցնում է կանդե-  
լարբներից մեկը. Արնանում է:



ՊԱՐ. Արդեօք ողին պատասխանելուէ:  
Սեղանը բաղիսում է Երկու անգամ,  
ԱՄԵՆՔԸ. Կը-պատասխանի, կը-պա-  
տասխանի:

ՊԱՐ. Դ'Օրենաս, հարցը՞ք:  
Դ'ՕԲ. Ես կամենում եմ իմանալ, թէ  
երկաթուղու այն գնացքը, որով պէտք  
է ուզեռուէր Սիմին, գնաց արդեօք:  
ԺՈԲ. Ի հարկէ-որ գնաց սրանից մի  
ժամ առաջ:

Դ'ՕԲ. Ես կամենում եմ որ ինըը ո-  
գին ասի ինձ այդ բանը:

Սեղանն սկսում է մին յանախ, մին  
ուշ-ուշ բաղիսել:  
ԴԱԻ. (Նշանակելով նարուածները.)  
Լուսամտին նայեցէք:

ԱՄԵՆՔԸ. (Նայում էն նեմելիին կող-  
մը:) Ոչինչ չի երևում:

ՊԱՐ. Արդեօք այսուհեղ է ողին: (Սե-  
ղանը բաղիսում է մեկ անգամ,) Ի՞նչ  
պէտք է անել:

Սեղանը բաղիսում է արագ-արագ:  
ԴԱԻ. Դարձեալ նոյնը: Լուսամտին  
նայեցէք:

ԴԵԼ. Ա՛խ, Տէր Աստուած, երկի ա-  
ջակողմեան լուսամտի համար է ա-

սում, որ ծածկուած է վարագոյրով:  
Սեղանը բաղիսում է Երեխ անգամ:

Դ'ՕԲ. Ճրագները հանգցըէք:  
ԿԼԱԻ. (Հանգցնում է:) Դէ հիմա բո-  
լորովին մութն է:

ՊԱՐ. Զեղանից մէկը թող ետ բաշէ  
վարագոյրը:

Կատիկը ես և հաշում վարագոյ-  
րը, կարմրագոյն բոցը լուսաւո-  
րում է ողջ սենեակը:

ԱՄԵՆՔԸ. (Տեղներից վեր բռչելով:)  
ՏԷՐ Աստուած, այդ ի՞նչ է... Հրդեհն...

Դ'ՕԲ. Լուսամուտը բաց արէք:  
Կատիկը բաց և անում լուսամուտը.  
լսկում են աղաղակներ. «Հրդեհ,  
հրդեհ... Ո՞րտեղ է հրդեհը... —

Երկաթուղու կայարանում»...  
ԿԼԱԻ. (Գլուխը դուրս բերելով լուսա-  
մտից:) Ո՞րտեղ է հրդեհը, ի՞նչ էք ասում:

ԶԱՅՆԵՐ. (Փողոցից:) Երկաթուղու  
գնացքն այրուեց... կայարանից հաղիւ  
հեռացած՝ ամբողջովին այրուեց:

Դ'ՕԲ. Շնչւ, շնչւ արէք գնանք այն-  
տեղ... Սիմին...

Ա, ա ր ա զ ո յ ր

## ԱՐԱՐՈՒԻԾԺ ԵՐԿՐՈՐԾ

Բեմը ներկայացնում է գեղեցիկ զարդարած  
մի մեծ սենեակ. մեջը շատ ծաղիկներ,  
Մեջեղը ընկողմարան, անկիւններից մե-  
կում մի փոքրիկ գահաւորակ, միխանի  
խոշոր արռակ—պուֆ: Խորբում դուռը,  
որ սանում է դեսի միւս սենեակը. ձախ  
կողմում մուտքի դուռը, եւկու վարագու-  
րուած լուսանու ևայում ևն փողոցին:  
Բազմոցի ուերի մօս բարձեր, որնեց վրայ՝  
վարագոյրը բարձրանալիս նոսած է Սօն-  
ձան: Դուժողուրիւնը կատարվում է  
միւս օրը:

## ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

### ՍԻՄԻ ԵՒ ԱՏՕՆՁԱ

ՍԻՄ. (Առաւտօնեան սպիտակ հագուս-  
տով նոսած է բազմոցի վրայ. Սօնձան՝  
նրա ձեռքերը իր ձեռքերի մեջ առած  
նոսած է նրա ուերի մօս:) Ի՞նչպէս խա-  
ղաղ է այստեղ. արդեօք մենակ ինք:  
Սակայն ինչու եմ վախենում այսպէս:

ԱՏ. Այդպէս ջղային չպէտք է լինել,  
իմ անսման: Մենք մենակ ինք, բոլո-  
րովին մենակ: Միբում եմ քեզ, ես քո  
հաւտաարիմ ստրուկն եմ, ահա այսպէս՝  
իմ ամբողջ կանքը կ'անցկացնեմ քո  
ոտերի մօտ:

ՍԻՄ. (Մտախոհ:) Նա յանկարծ ին-  
ձանից ծաղիկ խնդրեց... Ի՞նչպէս զար-  
մանալի է:

ԱՏ. Եյդ ով:

ՍԻՄ. Ալբերտօն՝ ամուսինս...

ԱՏ. (Համբուրելով նրա ձեռքի:) Ի՞նչ  
կարիք կայ յիշելու այդ սառը, մեղ հա-  
մար օտար մարդուն: Անհրաժեշտ է  
մոռանալ բոլոր անցեալը: Ես քեզ կը  
շրջապատեմ այնպիսի բուռչ, քնքուշ  
ու կաթողին սիրով, որպիսին քո եսա-  
սէր ամուսինը երազումն անգամ չի  
տեսել:

ՍԻՄ. Այն, այդ ճշմարիտ է, Միքայ-  
էլ... Օ՛, իմս Միքայէլ... Գրկիր ինձ,  
ամուր սեղմիր ինձ կըծքիդ. կամինում  
եմ ամեն ինչ մոռանալ...

ԱՏ. (Գրկելով) Այսուհետև մենք լնդ-  
միշտ անամշատ կը-լինենք: Օ՛, Երբ պի-  
տի լինես մեր կախարդական երկրում,

—իմ չընազ հայրենիքում, ուր ես հայրենի ամրոց ունեմ: Ի՞նչպէս պէտք է հպարտանան նախնիքներիս ստուերները, երբ քեզ տանեմ այնտեղ:

ՍիՄ. Ո՛, այն, Միքայէլ, մենք կ'երթանք այնտեղ: Ես ապահարզան ձեռք կը-բերեմ, մենք կ'ամուսնանանք և երջանիկ կը-լինենք: (ՄՏի ետեւից ընկնելով:) Սակայն ինչո՞ւ էր նա այնպէս տըշուր:

ՍՏ. (Վեր կենալով:) Դմարձեալ... Ուզիլս ասեմ՝ քիչ է մնում որ նախանձուեմ. այնպէս պէտք է մտածեմ, թէ դու քո ամուսնուն ես սիրում:

ՍիՄ. (Կրակ կտրած:) Եթէ ես նրան լինէի սիրելիս, ճիմա ես այստեղ չէի լինիլ. (Կատաց:) մանաւանդ՝ եթէ նա ինձ սիրելիս լինէր:

ՍՏ. Սակայն միթէ նա կարող էր սիրել. այն՝ սառը, չափած-ձևածը... Դէ ինքդ ասա. միթէ ինքը չհամաձայնեց այս անջատմանը՝ հէնց քո առաջին խօսքից յետոյ:

ՍիՄ. Ո՛, այն: Սակայն այդ փոխադարձ ազատ գործողութեան սկզբունքը՝ ինչ ասել կ'ուզի, վրդովումէր ինձ: Միթէ

կարելի է դատողութիւններ անել, երբ սիրում ես:

ՍՏ. Տեսնում ես ուրեմն. այն-ինչ նա շարունակ դատողութիւններ էր անում:

ՍիՄ. Շարունակ... Բայց վերջին օրերը նա ինչո՞ւ այնպէս փոխուեց... Ի՞նչպէս թաղանձում էր որ թոյլ տայի իրան ճանապարհ զցել ինձ՝ գոնէ մինչ չել կալէ:

ՍՏ. (Ծալրով:) Երկի գոկաօր Պարիզ գոտը խորհուրդ էր տուել նրան մի փոքր զրոսանք կատարելու:

ՍիՄ. (Վեր կենալով:) Շատ հաւանական է: Ա՛խ, այստեղքեզ մօտ ինչ լաւ է. ինչպէս յարմար ու կարգին է Կմեն բան: (Կիպ-կիպելով նրան:) Իսկ երկաթուղու գնացքը ճիմա արագընթաց պահում է: Ամենքն էլ կարծում են, թէ ես գնացի: (Ծիծալրում եմ) Հա, հա, հա... Եթէ մինը կայ, որ սաստիկ գոն է, այդ անշուշտ լիւսիէն է: Մի ամրող ձեռք հագուստ ստացաւ, այժմ գնում է առաջին կարգով, առանձին կուտէի մէջ: Միայն-թէ սաստիկ ուրախութիւնից չկորցնէր արկը-դիկս:

ԱՏ. Ի՞նչ արկղիկ:  
ՄԻՄ. (Անփոյք կերպով:) Զարդա-  
րանքներիս արկղիկը:

ԱՏ. (Սարսափով:) Աղամանզներնիվ:  
ՄԻՄ. Այս. աղամանզներ, մար-  
գարիտներ, զմբուխներ... ԶԵ-որ ես  
չէի կարող սեզօնին գնալ Լօնդոն ու  
հետո ոչինչ չվերցնել:

ԱՏ. Ի՞նչ աններելի անհոգութիւն,  
թանկագին զարդարանըներով արկղիկը  
թողնել աղախուռ մօտ: Դէ, միթէ  
կարելի է այդպէս բան:

ՄԻՄ. (Ժպտալով:) Երեկի-թէ կարե-  
լի է որ ես այդպէս արի: Այս բանն  
ինչու է այդպէս քէֆոր կոտրում:

ԱՏ. Բայց, սիրելիս, չԵ-որ այդ մի  
ահագին գումար է. այդպիսի բաները  
ձեռքից չեն թողնում, այլ միշտ իրանց  
մօտն են պահում: Աններելի՛ անզգու-  
շութիւն... Ի՞նչպէս ես զլսի չընկայ  
կիսիչախն հարցնելու, թէ ի՞նչ է ձեռ-  
քինը:

ՄԻՄ. Ի՞նչպէս բարի ես դու. մինչեւ  
անգամ ունեցածներիս մասին էլ ես  
դոզգողում: Մինչդեռ նա... այն միւսը...  
նա նոյնիսկ ուշադրութիւն անգամ

չդարձրեց, թէ ինչ-ու-ինչ եմ վերցնում  
հետո: Եթէ ես կամենայի, կարող էի  
ամբողջ օժիտու հետո բերել, որովհե-  
տե բոլոր տոմսակները, արժեթղթերը,  
ամբողջ գրամագլուխս իմ սենեակում  
երկաթէ արկղի մէջ է լինում, որի բա-  
նալին էլ... (Ցոյց տալով վկից կախուած  
մի շատրակ ըլքայ:) ահա մօտու է:

ԱՏ. Ասում ես՝ ամբողջ գրամագլու-  
խըդ տանն է և քո անունով պահեստի  
չը գրուած գրամատանը:

ՄԻՄ. Այս. դու էլ գիտես որ նա  
լաւ տեղեակ է բօրսային խաղերին  
և նա շատ է մեծացրել իմ գրամագլու-  
խը. ես էլ՝ ի նշան շնորհակալութեան  
բոլորը թողել էի տանը, որ բան է,  
եթէ շրջանառութեան համար դրամի  
պէտք ունենար, կարողանար իմոնքը  
վերցնել:

ԱՏ. Եւ նա վերցնում էր:  
ՄԻՄ. Երբէք, այլ շարունակ գլուխս  
տանում էր, թէ թող քո անունով դրա-  
մատանը զնեմ. իսկ ես շարունակ յե-  
տաձգում էի և ահա հիմա...

ԱՏ. Հիմա ի՞նչ:  
ՄԻՄ. Ամեն ինչ նրան կը-մնայ: Ես

Նրանից հեռացայ... փողերս պահանջեւու համար նոր հօ ես չեմ զնալու նրա մօտ:

ԱՏ. Ուրիշ կերպ միթէ կարելի է, Միմի:  
Դուռը բաղխում են:

ՍԻՄ. Դուռը բաղխում են, արդեօք  
մվ կարող է լինել: Միքայէլ, ես վա-  
խենում եմ:

ԱՏ. Տէր Աստուած, ինչ երեխան ես.  
դու գնա այն սենեակը:

ՍԻՄ. Ո՛չ, ոչ, ես դեռ ուզում եմ ի-  
մանալ՝ դուռը ժեծողն ով է: (Կայիշելով:)  
Հապա եթէ իմ ետևից եկած լինեն:

ԱՏ. Ում մտքովը կարող էր անցնել  
որ մենք այստեղ ենք:

Դուան բաղխումը կրկնվում է:

ՍԻՄ. Գնա հարցրու տես, թէ ով է:

ԱՏ. (Մօտենալով դռանը) Ո՞վ ես.  
Ի՞նչ ես ուզում:

Ֆիլ. (Դուան ետևին): Ես եմ, ես,  
Ֆիլիպը, անհրաժեշտ բան ունեմ ձեզ  
ասելու:

ԱՏ. Իսկոյն, միքիչ սպասիր: (Սիմի-  
ին:) Տեսաբ ուրիմի. այդ իմ սպա-  
սաւորն է: Դէ, հանգստացիր և խելօք  
եղիր. գնա այն սենեակը:

ՍԻՄ. Միքայէլ, սպասաւորդ ինչո՞ւ  
է եկել. ես վախենում եմ:  
ԱՏ. Գնա, իմ անսման, ես իսկոյն  
կ'իմանամ և քեզ կ'ասեմ:

Սիմին դեռ անուր կպչում է նը-  
րան եւ ապա քե գնում:

### ՏԵՍԻԼ Բ

Սօննա, մենակ, յետոյ Ֆիլիպ

ԱՏ. (Զայրագին:) Ա՛խ, այս կանայք.  
իրանց ամբողջ կալողութիւնը ուրիշ-  
ների ձեռքին թողնելուց չեն վախենում,  
դուն թղկոցիցն են վախենում: (Բաց  
է անում դռուր, մենում է Ֆիլիպը:) Ին-  
չո՞ւ ես եկել. քեզ չհրամայեցի՞ որ ինձ  
անհանգիստ չանես: Ի՞նչ է պատահել:  
Ֆիլ. Թժբաղդութիւն:

ԱՏ. (Եայելով դեպի միւս սենեակի  
կողմը:) Կամաց, հօ չես գժուել: Ի՞նչ  
դժբաղդութեան մասին ես ասում:

Ֆիլ. Երկաթուզու այն գնացքը, ո-  
րով գնացին տիկինները, այրուեց:

ԱՏ. Ի՞նչպէս թէ այրուեց. Ի՞նչ գը-  
նացք. ինչեր ես ասում:

Ֆիլ. Այս գնացքը, որով երէկ դուք  
ճանապարհ դրիբ ձեր ծանօթ տիզին-  
ներին: Գնացքը կայարանից դեռ չհե-  
ռացած՝ շոգեկաթսան պայթել է: Այս  
րոպէիս հանեցին դիակները: Լուսա-  
մտից նայեցէք, թէ ինչ է կատար-  
վում փողոցում. ժողովուրդը խմբերով  
դիմում է կայարան: Արդէն ամբողջ  
քաղաքը գիտի պատահած գժրաղղու-  
թեան մասին:

ՍՏ. (Վազում է լուսամտի մօս եւ  
վարագոյնը եւ բառում) Աստուած իմ,  
ինչ սարսափելի բան է: Ֆիլիպ, շնուր,  
վազիր գնա այնտեղ, մանրամասն իմա-  
ցիր՝ թէ ով է այրուել, ում հանդիպե-  
ցիր այնտեղ և իսկոյն արի ինձ ի-  
մաց տուր:

Ֆիլ. Գնում եմ: (Կանգ առնելով:) Արիշն-թէ... ես արդէն այնտեղ էի...  
Կարծեմ որ տիկին թեկղին այրուել է:

ՍՏ. Դու գնա. յիմար-յիմար բաներ  
մի խօսիր, մինչև ճիշտը չիմանաս:

Ֆիլիպը դուրս է գնում:

## ՏԵՍԻԼ 9

Սօնիան եւ Սիմի

ՄԻՄ. (Նեմքում, անհանգիս: ) Այդ  
Ֆիլիպն էր. Ի՞նչ էր ասում. ինչո՞ւ էր  
եկել:

ՍՏ. Որովհետեւ ծալը պակաս է. նա  
ինձ հաւատացնում էր՝ որպէս-թէ ես  
եմ հրամայել առաւոտեան գալ պատ-  
ուէրներ ստանալու:

ՄԻՄ. Բայց ինձ այնպէս թուաց որ  
ձայնիդ մէջ անհանգստութիւն էր նը-  
կատվում:

ՍՏ. Դու չափազանց դիւրազգած ես:  
Գնա, իմ աննման, հազնութիր. ուզում  
եմ փակ կառը վարձել որ միասին  
գնանք գրասնելու:

ՄԻՄ. Հապա դու ի՞նչ պէտք է անես:

ՍՏ. Ե՞ս... ես պէտք է անպատճառ  
պատասխանեմ տանից ստացուած նա-  
մակին... Գնա այն սենեակը և մի շտա-  
պիր:

ՄԻՄ. (Ուրախ: ) Այս, մի շտապիր:  
Ասել է թէ հազնուելու համար դեռ  
ժամանակ կ'ունենամ: Ես հաւանում եմ

այստեղը, դու քո նամակը գրիր, իսկ  
ես բազմոցի վրայ կը-պառկեմ. մի վա-  
խնար, քեզ չեմ խանդարիլ:

**Ս. (Քննութեամբ:)** Միթէ կարող  
եմ որևէ գործով գրաղուել՝ դժանա-  
լով որ դու այստեղ ես: Գնա այն սե-  
նեակը, սիրելիս, և մազերդ այն ձեռվ  
սանրիր, որ ինձ դիւր է գալիս. չէ-որ  
այսօրուայ հագնուելոյ յատկապէս ինձ  
համար է լինելու:

**ՍիՄ.** (Բազկարողի մեջ չսիելով:) Իս-  
կո՞յն, մօտ արի այստեղ:

**Ս. (Մօս զնալով ետելից:)** Ի՞նչ ես  
ուզում:

**ՍիՄ.** Ես ուզում եմ մի շատ, շատ  
կարեռ բանի մասին հարցնել:

**Ս. (Անհանգսութեամբ:)** Ի՞նչ բանի:

**ՍիՄ.** (Երան քերելով դեսի իրան:)

Դու ինձ սիրում ես:

**Ս. Սիմի:**

**ՍիՄ.** (Փմածին եւ ուրախ:)

Հարցիս  
պատասխանիր:

**Ս. Սիրում եմ, պաշտում եմ. բայց  
դու հօ ալդ զի՞տես:**

**ՍիՄ.** Ես լսել եմ ուզում: Միթէ դու<sup>1</sup>  
չես հասկանում, թէ ի՞նչքաղցը երաժըշ-

տութիւն կայ մի կնոջ համալ՝ «սի-  
րում եմ» խօսքի մէջ:

**Ս. (Համարեա անհամբեր:)** Միրում  
եմ, սիրում եմ...

**ՍիՄ.** (Չեռքերի մեջ առնելով երա  
գլուխը, համբուրում և աշխերը. կատաց:)

Միրում եմ, սիրում եմ... (Վեր բռնելով  
բազկարողից:)

Ահա այժմ կ'երթամհազ-  
նուելու:

Վազելով դուրս է գնում:

**Ս. (Մենակ:)** Աստուած իս, ի՞նչ  
ասնջանք է: Զէի իմանում, թէ ի՞նչ  
հնարով հեռացնեմ նրան այստեղից:  
Այս ի՞նչ դժբաղդութիւն էր, որ եկաւ...  
Սրդեօք վերջն ի՞նչ է լինելու:

**ՍիՄ.** (Հերարձակ երեւալով շեմբում:)

Միքայէլ, առանց աղախնի օգնութեան  
չեմ կարողանում սանրուել: (Ժրա-  
տալով:)

Արդեօք դու չե՞ս օգնիլ:

**Ս. (Անհամբեր:)** Միմի, չէ-որ քեզ  
ի՞նդրեցի:

**ՍիՄ.** (Ներս ընկնելով:)

Ի՞նչ է պա-  
տահել, ի՞նչ է պատահել: Հիմա ար-  
դէն ես այստեղից դուրս չեմ գնալ,  
մինչեւոր չասես ի՞նձ, թէ ի՞նչն է ըեզ  
այդպէս վրդովել:

Լուսամտի ետելից ձայներ են լսվում:  
Ս. Աղաչում եմ, գնա այն սե-  
նեակը:

ՄԻՄ. (Վազելով լուսամտի մօս, ես է  
քառում վարագոյրը:) Տէր Աստուած,  
այս ինչ շատ ժողովուրդ կայ. ինչպի-  
սի աղաղակներ. ինչու են ամենքն էլ  
դէպի կայարան վազում... Միքայէլ,  
դու ինձանից բան ես ծածկում... (Նսա-  
պով մօսենում է նրան) Օ՛, իսէր Աստու-  
ծոյ, ասա ինձ:

Ս. Երկաթուղու այն գնացքը, որով  
գու պէտք է գնայիր, կարծեմ դժբաղ-  
դութեան է հանդիպել: Ես Ֆիլիպին  
այնտեղ ուղարկեցի՝ ճիշտն իմանալու.  
ամեն բոլէ նա կարող է վերադառ-  
նալ: Երդում եմ որ ուրիշ որևէ բան  
չգիտեմ... Աղաչում եմ հեռացիր այս-  
տեղից:

ՄԻՄ. Աստուած իմ, Աստուած, այս  
ինչ բան է արդեօք... Ես գնում եմ,  
բայց հէնցոր Ֆիլիպը վերադառնայ,  
իսկոյն կանչիր ինձ և ամեն բան  
ասա:

Ս. Լաւ, լաւ, խօսք եմ տալիս. դէ  
շնւա գնա:

ՄԻՄ. Ես այդպէս էլ համոզուած էի...  
(Բենի ետելից զանգի ձայն:) որ ան-  
պատճառ պէտք է մի բան պատահի:  
Դուրս է գնում:

Ս. (Մենակ:) Այդ ի՞նչ էր. ինձ այն-  
պէս թուաց, թէ զանգի ձայն լսեցի:

Դուռը բայխում են, Սօնձան բաց  
է անում. Եերս է վազում Ֆիլիպը:

### ՏԵՍԻԼ Դ

ԱՏՈՆՁԱ ԵՒ ՖԻԼԻՊ

ՖԻԼ. Իմ ետելից կրնկակոյս գալիս են  
Ս. Ո՞վքեր:

ՖԻԼ. Պարոն Դ'Օբենասը, նրա եղ-  
բայրը, իսկ նրանց հետ էլի ուրիշ երկու  
պարոն: Դրանց պատահեցի այնտեղ,  
այրուած դիակների մօտ: Պարոն Դ'Օ-  
բենասը ճանաչեց իր ամուսնուն այն  
արկղից ու իրեղներից, որոնք պա-  
տահաբար չէին այրուել:

Ս. (Մեկուսի:) Արկղիկն ազատուած  
է... Բաց այս գուաը և դուրս գնա: (Ֆի-  
լիպը դուրս է գնում ցոյց տուած դրենվ:  
Սօնձան վազում է դռների մօս.) Միմի,



Սիմի: (Սիմիի ձայնը՝ « Իսկայն կը-գամ»:) Ի սէր Աստուծոյ, դուքս չգաս. հիմա որտեղ որ է՞ օտար մարդիկ կը-գանց Գուռը փակուն է:

### ՏԵՍԻԼ Ե

ԱՏՕՆՉԱ, ԴՕԲԻՆԱՍ, ԺՈՐԺ, ԿԱՄ-  
ԻՒՔԻ ԵՒ ԴԵԶՈԲԻԷ

ԴՕԲ. (Մազեր զզզուած, գլխաբաց, փառքար բանուած, առանց ձեւնոցների, իսկ միւսները վերին աստիճանի վայելուչ հազեռուած: ) Ստօնձա, Ստօնձա, ի սէր Աստուծոյ, դուք տեսաք նրանց... Սիմի, Սիմի... Միթէ այդ նա էր:

ԺՈՐ. (Մօտենալով Ստօնձային, լրջորեն: ) Ստօնձա, դուք ուզեկցեցիք Սիմին ու թեկդիին. գնաց Սիմին:

ԴՕԲ. Կարելի է թէ նըանք մի բուպէով ուշացան: Սիմին թեկդիի հետ էր... Այս:

ԱՅ. Նըանք երէկ գնացին:

ԴՕԲ. Գնացին, գնացին...

ԱՅ. (Շփորուած) Այս... ես ձանապարհ դրի նըանց. երբ վագօն մտան, ես վերադարձայ...

ԴՕԲ. (Յուստիա, լնկնելով լնկող-մարանի վրայ: ) Ուրեմն այն Սիմին էր... Սիմին... Սակայն ես ինչու կասկածեցի արդեօք: Զնայելով որ կրակը բոլորովին կերպարանափոխ էր արել թեկդիին, բայց և-այնպէս իսկոյն ճանաչեցի, այն-ինչ Սիմիին... յանկարծ ինձ այնպէս թուաց, թէ այդ նա չէ: (Սուսալակամ է:) Սիմին... Սիմին մեռել է... այնպիսի սարսափելի մահով, մեռակ, կրակի մէջ... Սիմի, ինչու քեզ լսեցի... Ես պէտք է վագէի, ճանապարհ զգէի քեզ, թէկուզ միւս վագօնով, այն-ժամանակ մենք միասին կը-մեռնէինք: Սիմին, իմ անմանն Սիմին կրակի մէջ... 0-, Աստուած իմ Աստուած իմ. նա մեռաւ, չիմանալով, թէ ինչպէս եմ սէրում իրան: (Տեղից ցատկելով, վազվում է սենեակում: ) Ո՛չ, այն դիակը Սիմի-ինը չէ... Սիրոս վկայում է, որ նա ողջ է... Սիմի, արդեօք լսում հսինձ: Զէ-որ սիրումէի քեզ և խելագարի պէս նախանձում, բայց չէի համարձակ-վում խոստովանուել: Մենք վճռել էինք ապրել ըստ սկզբմունքի... (Բոնելով վկութը: ) Ի՞նչ ասել է սկզբմունք, երբ

սիրտ քիչ է մնում։ դուրս թռչի  
տեղից։ Մենք վճռել էինք՝ ոչ մէկ բա-  
նով արգելը չլինել միմեանց, իրար  
չնեղացնել։ մենք կամեցանք մեր ա-  
մուսնութիւնը՝ ընկերութիւն դարձնել,  
որ հիմնուած լինէր բանականութեան  
վրայ։ Ի՞նչ անխելքութիւն և որպիսի  
յիմարութիւն։ Կեանքի քաղցրութիւնը  
կայանում է նրանում որ մարդ սիրի  
առանց անջատուելու... Օ՛, Սիմի՛, Սի-  
մի՛, ես իմ ամրող արինս կը-տայի,  
եթէ միայն կարողանայի քեզ վերադար-  
ձնել, որպէսզի ասեմ, թէ ինչպէս եմ  
սիրում քեզ։ (Նտապ մօսենում Սօնձայ-  
ին։) Ստօնձա, վերջին անգամը դուք  
տեսաք նրան։ արդեօք նա ուրմի  
էր... յիշում էր ինձ։ արդեօք որևէ  
պատուէր չտուած ձեզ՝ ինձ տալու...  
Ստօնձա, գուցէ նա այն գնացքով  
չգնաց։

ԱՏ. Ո՛չ, նրանով գնաց։ նա ոչինչ  
չսաց և շատ ուրախ էր։

Դ'ՕԲ. Նա չէր նախազգում...

ԴԵԶ. Դ'Օբնաս, հանգստացէք...  
Զնոր տուէք նրան։

ՃՈՐ. (Մօսենալով միւս սենեակի դը-

ոանլ։) Արդեօք գոնէ այն սենեակում  
ջուր չկայ։

ԱՏ. (Շտապ ընկնելով դռների վրայ։)  
Ո՛չ, ոչ, այդ իմ սենեակը չէ... Զի  
կարելի...

ՃՈՐ. (Նայելով երա աշխերին։) Զի  
կարելի...

Դ'Օտենասը՝ զլուխը ձեռքերի մէջ ա-  
ռա ծ, անկապ խօսեր արտասանե-  
լով, ման է զալիս սենեակի մէջ։

ԴԵԶ. Գոնէ սպիրտ, կամ օ-դը-կօլօն  
տուէք. միթէ դրանցից ոչ մէկն էլ չունէք։

ԱՏ. Տէր Աստուած, ես այստեղ չեմ  
ապրում... ես այստեղ... ծանօթներիս  
մօտ եմ եկել...

Դ'ՕԲ. (Կանգ առնելով։) Ի՞նչ սարսա-  
փելի բան... կրակ, կրակ ամեն կողմից,  
իսկ Սիմիս անօգնական, մեն-ու-մենակ:  
Երէկ երբ նկատեցինք այն հրդեհը, ես  
պարտաւոր էի իսկոյն-ևեթ վազել գը-  
նալ։ Ո՞վ էր, որ արգելեց ինձ... (Գալ-  
րոյրով։) Ո՞վ, ո՞վ ասաց, թէ այդ մի սար-  
քովի բան է, որ հրդեհը բոլորովին ու-  
րիշ տեղ է։ Դօկտօր Դաւիթսօնը։

ԿԼ. Բայց չչոր մենք համարեա իս-  
կոյն-ևեթ վազեցինք դէպի կայարան։

Դ.ՕԲ. Աշխալոյն-Աեթ, քանիմի բու-  
պէ մենք իզուր կորցրինք, երբ Սիմին  
շատ կարելի է թէ հէնց այդ միջոցին  
գեռ կովում էր մահուան հետ: Խակյե-  
տոյ... (Խօսում է ինչպես-ը զառանց անի  
մէջ:) մենք ամբողջ գիշեր ման էինք  
գալիս աւերակների մէջ և դուրս հա-  
նուում դիակները, մտիկ տալիս նը-  
րանց: Ժօրծը գտաւ արկղիկը: (Արկղիկ  
բառը լսելիս Սօննան անհանգիս շար-  
ժումն է զարծում:)... Թեկղիին էլի կա-  
րելի էր ճանաչել, սակայն նրա կողքին,  
նրան կից մի ինչոր սարսափելի...  
Միթէ այն Սիմին էր... (Ճակատը կըպ-  
ցնում է պատին եւ հեկեկում) Սիմին,  
Սիմին, ես չեմ կարող հաւատալ, որ  
դու մեռել եսու...

ԺՕԲ. (Կատիկին եւ Դեզօբիկին:) Ի՞նչ  
պատրուակով էլ ուզում է լինի, մի-  
այն-թէ տարէք նրան այստեղից:

ԴԵԶ. ԴՇըհնաս, աշխարհիս երեսին  
հրաշքներ շատ են եղել: կարելի է թէ  
այս միջոցին՝ երբ դուք այստեղ խելք-  
ներդ էք թոցնում, նա էլ ձեզ է որո-  
նում այստեղ:

ԿԼԱՒ. Մի անգամ ես գնանք այնտեղ,

ով է իմանում, շատ կարելի է թէ նա  
մի որնէ հրաշքով ազատուել է:

Դ.ՕԲ. Ի՞նչ ասացիք. ազատուել է.  
կարելի է թէ ազատուել է... Դէ, ու-  
րեմն շնուր. վաղնիք այնտեղ, վաղենք  
ուրեմն... Ի՞նչ կասէք, եթէ Սիմիս ողջ  
է և ինձ է որոնում... Սիմի...

Դաւս է վազում. Կատիկեն ու Դե-  
զօբիկն նետեւում են երան:

## ՏԵՍԻԼ Զ

ԱՅՈՆՉԱ. Եհ ԺՕՐԾ

ԺՕԲ. (Խօսնալով Սօննալին:) ՆԵ-  
ՐԵՑՔ որ ես մնացի. քանիմի խօսք պէտք  
է ասեմ ձեզ:

ԱՏ. Պատրաստ եմ ձեզ ծառայելու.  
թէպէտե, ուղիղն ասեմ, չեմ իմանում, թէ  
ուրիշ լինչ կարող էի էլի աւելացնել:

ԺՕԲ. Դուք կարող էիք ճշմարիտն  
ասել:

ԱՏ. (Նփորուելով:) Ի՞նչպէս թէ ճշ-  
մարիտը:

ԺՕԲ. Սիմին գնմց:

ԱՏ. Ես արդէն ասացի:

ԺՕԲ. Եւ այս դուռը տանում է զէ-



պի այն սենեակը, որ ձեզ չլու պատշաճում:

ԱՏ. Պարոն:

ԺՕՐ. (Մօսենալով դռանը, բաղխում է:) Սիմի, բաց դռւոք. ես եմ, ժօրժ եղբայրդ:

ԱՏ. (Բոնելով ժօրժի ձեռքը,) Պարոն Դօքենաս, ինչ իրաւունք ունէք դռւք իմ սենեակում...

ԺՕՐ. (Ձեռքը խելով.) Զէ-որ Սիմին գնացել է, իսկ այս սենեակը ձեզ չի պատկանում: (Բաղխում է:) Սիմի, դռւրս արի, եթէ ոչ դռւոք կը-կոտրեմ:

Դուան Շեմում երեւում է Սիմին, աշերն արտասուբնով լի. ձեռքերով ծածկում է երեսը:

### ՏԵՍԻԼ Է

#### ՆՐԱՆՔ ԵՒ ՍԻՄԻ

ՍԻՄ. (Փարուելով տեսօր վզով,) Ժօրժ, ժօրժ, ինչ սարսափելի բան է...-

ԱՏ. (Կատաղուքեան մեջ:) Ի՞նչ անգուշութիւն:

ԺՕՐ. (Ուշադրութիւն չդարձնելով Սօօն.

ձայի վրայ:) Դու բոլոր լսում էիր և կարողացաք դռւրս չգնել... Օ՛, Սիմի...

ՍԻՄ. (Եռանդով.) Միթէ կարող էի համարձակուել, միթէ խայտառակութիւնն աւելի լաւ է, բան թէ մահը:

ԺՕՐ. Դու ձշմարիս ես ասում: Այժմ՝ ինչ պէտք է անես:

ՍԻՄ. (Հեկեկալով.) Ի՞նչ պէտք է անեմ. ոչինչ, ես մեռել եմ, էլ չկամ: Ի՞նձ պէտք է թաղել և մոռանալ. մոռանալ որ աշխարհիս երեսին մի դըժքաղդ կին էր ապառում:

ԺՕՐ. Բայց չլու դու լսեցիր, թէ նա ինչպէս է սիրում քեզ, որ նա տանջվում է:

ՍԻՄ. (Յուտահաս:) Ի՞նչո՞ւ նա հիմա ասաց այդ բանը: Այժմ ոչ է: Ես չէի իմանում, թէ նա ինչ զգացմունք է տածում գէպի ինձ. մինչև անգամ չէի կարող երեակայել որ նրան այդպիսի սարսափելի ցաւ կը-պատճառեմ: (Դառը ծիծաղումէ:) Հա, հա, հա... Աստուած իմ, մեր ամուսնական կեանքի մէջ որչափ խոհեմութիւն, որչափ սկզբունք կար...

ԺՕՐ. Սակայն հիմա դու ամեն բան գիտես: Հէնց այս բոպէիս հեռացիր

այստեղից և շտապիր տուն։ Նա ամեն բանի կը-հաւատայ, հէնց ինչ-էլ-որ ասես. ևս երբէք երևան չեմ հանիլ քո այս գաղտնիքը։

ՍԻՄ. Գնամ տուն... (Նայում է Սօննայի վրայ, որ սեղանի մօս կանգնած մատերով թմբկահարում է։) Հօ չես գըժուել! Այսպիսի խայտառակութիւնից յետոյ այլևս ի՞նչպէս պէտք է մտիկ տամ ամուսնուս աշքերին, կամ ի՞նչպէս և ի՞նչ խօսքերով պէտք է ստեմ ու պատմեմ իմ ազատուելուս մասին։

ԺՕՐ. Ես քեզ կ'օգնեմ, մենք երկսով մի բան կը-մտածենք... Սիմի, բարոյապէս մի սպանիր քեզ. վերադարձիր քո տուն, քանի գեռ ուշ չէ։

ՍԻՄ. (Սօննում Սօննային եւ նրա ձեռքը բռնում։) Ո՞չ, այժմ այլկա ուշ է։

ԱՏ. Տեսաք, պարոն Դ'Օբենսոս, որ ես լուս համբերեցի։

ԺՕՐ. (Ռւշադրութիւն չդարձելով նրա վրայ։) Սիմի, մէկ այս մարդու վրայ նայիր։ Համեմատիր սրան ամուսնուդ հետ... Միթէ ոչինչ չես տեսնում և ոչինչ չես հասկանում։

ԱՏ. Պարոն, այդ վիրաւորանքի հա-

մար դուք ինձ պատասխան կը-տաք։  
ԺՕՐ. Ե'րբ կամենաք և նրանու կամենաք, միայն-թէ ձեզպէսները չեն մենամարտում։


ԱՏ. (Յարձակուելով Փօրդի վրայ։)  
Դուքս կորէք այստեղից։

ԺՕՐ. Եթէ նորից տեղիցդ շարժուէք,  
լուսամտից գուրս կը-շպրտեմ ձեզ։

ՍԻՄ. (Բնեկնելով նրանց մեջ։) Ժօրժ,  
խնդրում եմ գնաս, այստեղ քո տեղը  
չէ... ի՞նչ-որ քաշեցի, այն էլ հերիք է.  
ամօթիս վրայ նոր ամօթ մի աւելացնիր։ Տուն վերադարձալ ես անկարող  
եմ, այդ հօ ինքդ էլ ես հասկանում։  
Մնաս բարով, թող ինձ և գնա։

ԺՕՐ. Ո՞չ թէ մնաս բարով, Սիմի,  
այլ ցտեսութիւն։ Դու ինձ աւելի շուտ  
կը-կանչես, քան-որ կարծում ես  
Միթքդ պահիր, Սիմի, որ ես քո եղբայրն եմ և իսկոյն կը-գամ, հէնց-որ  
կանչես ինձ։ Ցտեսութիւն, իմ խեղճ  
Սիմի։

Դուքս և գնում։



## ՏԵՍԻԼ Ը

### ՍԻՄԻ և ՍՅՈՆՉԱ

**Ս. (Փօրձի ետելից:)** Անպիտան, գու  
ինձ հետ դեռ էլի գործ կ'ունենաս:

**ՍիՄ.** Միքայէլ, չէ՞-որ նա քեզ չի  
ճանաշում. հասկացիր, թէ ինչքան ցաւ  
պատճառեցի նրան:

**Ս. Օ՝** եթէ դու չլինէիր, նա չէր  
կարող կենդան <sup>\*)</sup> գուրս գնալ այստե-  
ղից:

**ՍիՄ.** Միքայէլ, բացի քեզանից ես  
այլևս ոչ-ոք չունեմ աշխարհիս երեսին:  
(Սարսափով հեռանալով նրա մօսից:)  
Լո՞ւմ ես, թէ ինչ է այդ. թաղման եր-  
գեցողութիւն է:

Վազում է դեպի լուսամուտը եւ  
վարագոյք բաց անում: Լուսա-  
մից շարունակ լսվում է բաղ-  
ման երգեցողութիւնը եւ հետզնետէ  
դադարում է հեռուում:

\*) Խնդրում եմ թէ ընթերցողից և թէ խա-  
ղացող դերասան-դերասանուհուց որ այդ բա-  
ռը տպագրական վրիպակ չհամարեն և հէնց  
այդպէս էլ թողնեն:

**Ս. (Նրա ձեռքից բռնիլով:)** Միմի,  
Սիմի, կարող են քեզ տեսնել:

**ՍիՄ.** (Կանգնելով վարագոյրի ետելը:)  
Ո՛չ, ոչ. մվ պէտք է այս կողմը նայի:  
Միքայէլ, տանում են, տանում են...  
Աւուսինս... ինչպէս հեկեկում է... նա  
հազիւ է քայլում... Սիմիին են տա-  
նում... մեռած Սիմիին... (Հեկեկում է:)  
Սիմին մեռել է... Օ՛, ինչպէս սարսա-  
մելի կերպով պատճուած եմ ես...

Լաց է լինում:

**Ս. (Աշխատելով հեռացնել լու-  
սամից:)** Սիմի, միթէ ինձ չես սի-  
րում:

**ՍիՄ.** Սիրում եմ... Բայց միթէ ես  
կամինում էի այդքան ցաւ պատճառել  
նրան... Նայիր, կանայք ծունկ են չո-  
քում. աղօթում են Սիմիի հոգու վրբ-  
կութեան համար: Ո՛հ, ինչպէս կը-ցան-  
կայի նրա տեղը լինել: Նա մեռաւ մա-  
քուր, ամուսնուց բռւն կերպով սիր-  
ուած: Օ՛, Միքայէլ, Միքայէլ, ինչպէս  
անբաղդ եմ ես: (Սօնձան աշխատում է  
Սիմիին հեռացնել լուսամից, բայց նա  
բաց է ընկնում նրա ձեռքից եւ իի նո-  
րից վազում դեպի լուսամուտը:) Ահա,

ահա ծառուեցին դէպի անկիւնը, Մնամուրարով, Սիմի... մնաս բարով...

Հեկեկում է:

ԱՅ. (Լուսամիջք հեռացնում է նրան գրելում:) Ի՞ն անգին, ի՞մ աղաւնեակր մուացիր այդ ամենը: Աւելի լաւ է խօսենք այն մասին, թէ ինչ է լինելու այսուհետեւ, ի՞նչպէս ուղղենք ան ամենը, ի՞նչոք պատահել է:

ՍԻՄ. (Որպիս խելագոր, բռնում է նրան ձեռքից:) Մենք այսօր-ևեթ գնանք, հէսց հիմա և նրգան կարելի է՝ շուտ: Հեռու փախչենք այս երկրից, գնանք այստեղ, քեզ մօտ, քո հայրենիք, ուր ո՞չոք ինձ չի ճանաչում, ո՞չոք ինձ Սիմի չի կանչիլ:

ԱՅ. Գնանք, հոգիս, բայց չչո-ոք դեռ պէտք է միքանի գործեր վերջացնենք այստեղ:

ՍԻՄ. Գործեր, մեռած Սիմին այլև լինչ գործեր լարող է ունենալ:

ԱՅ. Բայց չչո-ոք դու կինդան ես:

ՍԻՄ. Կենդան եմ... կենդան եմ՝ ես, քո կինը, բայց Սիմի Դ'Օքենասը այլ ես չկայ երկրիս երեսին, այս բոպէիս տարան նրան պատանցում դրած, ծա-

դիկներով ծածկուած, որի վրայ հեկեկաւմ էր ամուսինը, ազգականները հետևում էին նրա այրուած դիակին: Սիմին այժմ պառկելու է սառը հողի մէջ: Ի՞նչպէս սարսափելի է, Միքայէլ, ի՞նչպէս սարսափելի է, երբ մարդ սեպահական աչքով տեսնում է իր մահը:

Զեռերով ծածկում է երեսը եւ ցընցում հեկեկանից:

ԱՅ. Սիմի, այդ զառանցանք է, դու կարող ես հիւանդանալ... Նստիր այստեղ... Ահա այդպէս: (Նրան նստեցնում է զանառակի վրայ եւ ինքն էլ կողին նստում:) Գլուխդ դիր ուսիս, հանգըստացիր, սիրելիս: Ես միշտ հետդ կըլինեմ, մենք հեռու կը-լինենք այստեղից և այս ամենը կ'անցկինայ ինչպէս մի սարսափելի երազ: Միթէ դու չգիտես որ մարդիկ առհասարակ շատ դիւրազգած են դէպի մահը: Դու կենդան էիր, ամուսինդ քո արժէքը չէր հասկանում, իսկ հիմա այնպէս է կարծում, թէ մահացել ես յանկարծ, և ահա նա քեզ համար սուզ է անում: Հեկեկալով, աղաղակելով, վեց ամիս կամ մի ամբողջ տարի անցնի թէ-չէ, նա

սամելու է.—ամեն-ինչ դէպի լաւն է  
գնում:

ՍԻՄ. Դու կարծում ես՝ նա կը-  
միսիթարուլի:

ԱՏ. (Հեղիորին:) Օ՛, անկասկած: Ու-  
րեմն այժմ խօսենք, կենդան Սիմիի  
մասին, թէ ի՞նչպէս ձեռք բերենք ար-  
կդիկը:

ՍԻՄ. Ի՞նչ արկդիկ:

ԱՏ. Քո արկդիկը, որի մէջ էին թան-  
կագին զարդարանքներդ: Մէկ մտածիր  
թէ ի՞նչ բաղաւարութիւն է որ ազա-  
տուել է անվաս:

ՍԻՄ. Բայց չէ-որ այդ արկդիկն  
այժմ ամուսնուս մօտն է:

ԱՏ. Աւելի լաւ... կը հանակի ոչ-որ  
չի գողացել:

ՍԻՄ. Ճիշտ է, այն. սակայն ես ի՞նչ-  
պէս կարող եմ ստանալ այդ արկդիկը:

ԱՏ. Բայց չէ-որ մի առժամանակից  
յետոյ դու պէտք է ստիպուած. լինես՝  
կամ ինքդ անձամբ գնալ նրա մօտ և  
կամ գրել նրանք.

ՍԻՄ. Ե՞ս... գնամ նրա մօտ. ինչեր  
ես ասում, Միքայէլ:

ԱՏ. (Փաղաքանիով) Սիրելիս, ես

հասկանում եմ, թէ որքան գժուար  
է այդ քեզ համար, բայց չէ-որ վերջիւ-  
վերջոյ դու պէտք է յետ վերցնես նրա-  
նից քո արժէթղթերը, տոմսակները...:

ՍԻՄ. Դրանք իմը չեն, ես ոչինչ  
չունեմ:

ԱՏ. Ի՞նչպէս-թէ քոնը չեն. չէ-որ  
միքիչ առաջ դու էիր ասում որ քոնն  
են: Հապա վզիցդ կախուած փոքրիկ  
բանալին:

ՍԻՄ. Ա'ս, այս... Բայց այս բանա-  
լին այլևս ինձ չի պատկանում, այլ  
նրան՝ Սիմիին. իսկ նա մեռել է:

ԱՏ. Երախայութիւն մի անիր, Սիմի:

ՍԻՄ. Միքայէլ, Միքայէլ... Ես ի՞նչ-  
պէս կարող եմ գնալ ամուսնուս մօտ  
և ասել.—իմ փոխարէն դուք աղախնու  
դիակը թաղեցիք. ես տեսայ լուսա-  
մտից, թէ ի՞նչպէս ուժասպառ էիք լի-  
նում հեկեկանքից. լսեցի իմ սիրեկա-  
նիս սենեակում, թէ ի՞նչպէս աղերսում  
էիք նրան ասելու՝ որ շատ կարելի է  
թէ կենդան եմ... (Տեղից վեր ցատկե-  
լով.) թէ ի՞նչպէս դուք՝ քիչ էր մնում  
իւելներդ թոցնէիք լոկ այն մտքից  
որ ինձ հետ միասին չէք մեռնել, իսկ

ես միւս սենեակից դուրս չեկայ ձեզ  
մօտ և չսսացի.—միք լաց լինիլ՝ մի  
անարժան, ձեզ խաբող մի անհաւատաշ-  
րիմ կնոջ համար: Հէսց հիմա էլ ձեզ  
մօտ եմ եկել միմիայն նրա համար,  
որպէսի փողերս յետ վերցնեմ և ձեզ  
խայտառակ անեմ... Եւ այդ ամենը ես  
պէտք է ասեմ ամուսնուս:

ՍՅ. Բայց ես աղքատ եմ, Սիմի:

ՍԻՄ. (Փարուելով նրան: ) Ի՞նչ անենք  
որ աղքատ ես... Միքայէլ, կարիքն  
ինձ չի վախեցնում. մենք միասին կը-  
լինենք. ես երաժշտութեան, երգեցո-  
ղութեան դասեր կը-տամ:

ՍՅ. (Ազատուելով նրա գրկից: ) Ի՞նչ  
իդիլիա է: Եւ ես պէտք է մտիկ տամ,  
թէ ինչպէս՝ գեղեցիկ, վայելուչ ու գե-  
ղանի Միմին քիչ-քիչ դառնումէ հիւան-  
դոտ, մոռացուած դաստիարակչունի:

ՍԻՄ. Ես զօրեղ եմ, Միքայէլ. իսկ  
այն միտքը՝ թէ քեզ համար եմ աշխա-  
տում, ինձ եռանդ կը-տայ: Ասա ուրեմն,  
Երբ ենք գնալու այստեղից:

ՍՅ. Այդ քեզանից է կախուած: Մենք  
իսկոյն կը-ճանապարհուենք, հէսց-որ

գրես ամուսնուդ և գրամմերդ յետ  
ստանաս:

ՍԻՄ. Դարձեալ: Արդէն քեզ ասացի  
որ այդ երբէք լինելու բան չէ, երբէք:

ՍՅ. Յայն գէպս կը-մնանք այստեղ:

ՍԻՄ. (Սարսափով: ) Ի՞նչպէս-թէ այս-  
տեղ. բայց չէ-որ ես ոչ-միայն չեմ  
կարող փողոց դուրս դալ, այլ չեմ էլ  
համարձակուելու նոյնիսկ լուսամտից  
նայել:

ՍՅ. Ուրեմն լսիր ինձ և զրիր ամուս-  
նուդ. մենք կ'երթանք, հէսց-որ փո-  
ղերդ ստացուի:

ՍԻՄ. (Նայելով նրա աչերի մեջ,  
ծանր: ) Եւ այն-ժամանակ հետո կ'ա-  
մուսնանաս:

ՍՅ. Օ՛, այն, անմիջապէս:

ՍԻՄ. Իսկ առանց այդ փողերի:

ՍՅ. Ի՞նքդ մտածիր. ես քեզ սիրում  
եմ, Սիմի, կարելի է թէ ես մեռնեմ  
կարօտ քաշելուց, բայց ես անկարող  
եմ աղքատութեան մէջ գցել քեզ. ես  
չեմ թոյլ տալ, որ դու նեղութիւն քա-  
շես:

ՍԻՄ. Այդ շատ սրտաշարժ է... Բայց  
այդ թողնենք: Ես քեզ ուղղակի հար-



ցնում եմ.—Եթէ ես գնամ՝ ամուսնուս  
մօտ ու պահանջեմ դրամներս և ամենքն  
իմանան իմ անկրան, իմ անխեղճ վար-  
մունքիս մասին, ամենքն էլ երես թե-  
քեն ինձանից, մյուն-ժամանակ էլ դու  
ինձ քոնը կ'անուանես:

Ս. Այս... Ես կ'ասեմ, որ դու այդ  
ամենը տարար ինձ համար:

ՍիՄ. Բարի՛. իսկ եթէ թողնեմ որ  
ամուսինս սուզ պահի այրուած Սիմի՛  
համար, եթէ յանցանքս քաւելու հա-  
մար ընդմիշտ ծածկուեմ մարդկանցից,  
ինձ դատապարտեմ աղքատութեան և  
աշխատանքի, դու ինձ կը-թողնեմ:

Ս. Հասկացիր, Սիմի՛:

ՍիՄ. Աւելորդ խօսքեր մի ասիր.  
ուղղակի պատասխանիր. առանց փո-  
ղի կ'ամուսնանաս հետո: (Սօօնձան  
լուռ է եւ զլխակոր կանգնած:) Երդ-  
փում եմ ինձ համար ամենանուիրա-  
կան սրբութիւններով որ ես ամուս-  
նուս մօտ չեմ գնալ, նրանից ոչինչ  
չեմ վերցնիլ Դէ, ասա. առանց փողի  
կ'ամուսնանաս հետո:

Ս. Ո՛չ:

ՍիՄ. (Ինչպիս խելագար:) Ո՞չ. ո՞չ:  
Դու ասացիր՝ ո՞չ:

Ս. (Կոպտութեամբ:) Ո՞չ:

ՍիՄ. Ո՞չ... (Յարձակուելով վրան:)  
Ցած արարած...

Մի փառաւոր ապտակ է խփում:

Ս. (Սիմի՛ ձեռքերից բռնելով՝ վայր  
է զցում բազմոցի վրայ, Զսպելով կա-  
տաղութիւնը:) Երբկիցէ գուք կը-հաս-  
կանաք ձեր վարմունքի անարդարու-  
թիւնը և կը-գնահատէք մերժումն: Ես  
երեկոյեան կը-վերադառնամ այստեղ,  
ուր՝ յոյս ունեմ այլևս երբէք չհանդի-  
պել ձեզ:

Դուրս է գնում,

ՍիՄ. (Խելագարուածի նման:) Աս-  
տուած, Աստուած, ուր կորչեմ ես:  
(Վազում է դեպի դուռը:) Գնաց... Բայց  
միթէ այս երազ կամ զառանցանք չէ...  
Թողեց, ինձ թողեց մենակ... Այժմ ուր  
գնամ... Ռոպէ առաջ հեռանալ այստե-  
ղից... Ժօրժը, միայն Ժօրժը կարող  
է փրկել ինձ:

Վարազոյ

## ԱՐԱՐՈՒԻԱԾԻ ԵՐՐՈՐԴԻ

Բեմը ներկայացնում է ԹՌԵՆԱՍԻ խաղաֆից  
դուռ ունեցած տուեր: Յետին գիծն ամ-  
բողջապէս ապահեպատ է, որից չերւա-  
սենեակի և նմանում տուել: Չորս կողմն  
այգու թերեւ կարասիֆ: Խորիշի լայն կա-  
մարը դեպի այգին և նայում: Չափ  
կողմի վրայ դուռը, որ ներքին սենեակ-  
ներն և տանում, դեպի ազ լուսանուս:  
Ճօնարոն: Վարագոյը բարձրանալիս  
Թելքինն ու Փօրծը հեծածիւներով  
ներս և՛ մանում այգու կողմից:

## Տ Ե Ս Ի Լ Ա Ռ Ա Զ Ի Ն

ՃՕՐԺ ԵՒ ԴԵԼՖԻՆ, ԵՐԿՈՒԻՄՆ ԷԼ  
ՀԵԾԱՆԻԻԱԼԻՈՒԻ ՏԱՐԱԶՈՎ.

ՃՕՐ. (Թաշէլինակով հովհարելով  
երեսին: ) Ի՞նչպէս էլ շոք է: Ի՞նչ ես  
կարծում, քանի վերստ կտրեցինք, Դել-  
ֆին:

ԴԵԼ. (Նստելով նօնարօնի վրայ: )  
Զգիտեմ:

ՃՕՐ. Ցողնել էք:

ԴԵԼ. (Ճօնարօնի վրայ օրօրուելով: )  
Ո՞չ:

ՃՕՐ. Այդ ի՞նչ լակոնական պա-  
տասխաններ են: Կարելի է ենթադրել,  
թէ խօսք էք տուել՝ հետո ամմուկին  
չխօսելու: Ամբողջ ճանապարհին հէնց  
միայն լսում էի՝ այն, ոչ:

ԴԵԼ. Զեզ է այդպէս թվում:

ՃՕՐ. Դելֆին, այդպէս չի կարելի.  
Ես սովորել եմ ձեր սրտաբաց, սիրուն  
ճուռողելուն: Արդեօք ի՞նչ մեզ ունեմ  
ԴԵԼ. Դուք սարսափելի երևակայողն  
էք, ժօրժ:

ՃՕՐ. (Իրան պահելով: ) Երբ փոքր  
էիք, ես ձեզ ձեռքերիս վրայ էի ման-  
ածում. Երբ մեծացաք, չեր անձնուէր  
ասպետը դարձայ: Իսկ երբ Ալբերտօն  
պատահաբար հանդիպելով Սիմիլն  
վրան սիրահարուեց, ես երջանիկ էի  
որ կարող էի ձեզ քոյլս անուանել՝  
այնյուսով... (Նվորուելով: ) այնյուսով...

ԴԵԼ. (Տնագալարի: ) Որ քոյրերի  
հետ շատ էլ նազ չեն անում:

ՃՕՐ. (Նուանելով) Ա' մօթ է, սիրելի:  
Դելֆին: Ես հարուստ չեմ և աշխա-  
հիս մէջ այն դիբքը չունեմ, որ մարք

(դուս) ինքնահաւան է դարձնում: Ահար  
թէ ինչն էի լուսմ և միայն ուշիու-  
շով դիտում, թէ արդեօք ձեր փոքրիկ  
սրտիկը ոչինչ չի ասում, որպէսզի  
ինձ առիթ տրուի...»

Դել. (Վեր կենալով:) Իսկ ի՞նչպէս  
են մօտենում ջահէլ աղջկայ սրտին,  
Ժօրժ:

ԺՕՐ. Ի՞նչպէս, ի՞նչպէս:

Դել. Ահա ասեմ. լիակատար անկեղ-  
ծութեամբ:

ԺՕՐ. Բայց միթէ ես հրեէ բան  
ծածկել եմ ձեզանից:

Դել. Ո՞վ էր այն սկ շորերով ու  
թանձր քողով կինը, որի հետ երէկ  
երեկոյ խօսում էիք՝ ահա այնտեղ,  
պարտէզի դռան մօտ:

ԺՕՐ. (Ծփորուելով:) Քօղով կին,  
ինձ հետ...

Դել. Ժօրժ, միք ստիլ և միք աշ-  
խատիլ մի կերպ ազամուել: Դուք մօ-  
տանում էք որ իմ սենեակը վերեն է,  
իսկ լուսամուտն այդուն է նայում:  
Ես անձամբ տեսայ ձեզ:

ԺՕՐ. Բայց... ճշմարիտ...

Դել. (Երա խօսքը կտրելով) Որ ես

սխալուած եմ, այնպէս չէ, որ այն  
գուք չէիք, որ նա կին չէր և պար-  
տէզն էլ որևէ գուռը չունի... Ես գնում  
եմ Ալբերտօխն գանելու:

Կամենում է զնալ:

ԺՕՐ. (Բոնելով երա ձեռքից:) Դել-  
ֆին...

Դել. (Զեռքը դուրս կորցելով:) Ժօրժ,  
հաւատացէք՝ մենք իրար հետ խօսելու  
բան չունենք:

ԺՕՐ. Այդ իմ գաղտնիքը չէ:

Դել. Ա՛խ, Տէր Աստուած, ի հարկէ.  
այն կինը ձեզ բոլորովին օտար է,  
զրահամար էլ համբուրեցիք նրա ձեռքը:

ԺՕՐ. (Ճրուանելով:) Սիրելի՛ Դել-  
ֆին, չինի՞ թէ նախանձում էք:

Դել. (Բարկանալով:) Դուք գժուել  
էք, ես, ես եմ նախանձում: Դուք  
թէկուզ չորս, տասը, նոյնիսկ հարիւր  
կնոջ համբուրեցէք՝ և պարտէզում, և  
փողոցում, ինձ ինչ: (Երեսը տրզում է:  
Ես՝ նախանձում եմ. հը'...

Ուսերը վեր է բաւում,

ԺՕՐ. Դէ լաւ՝ կար թէ չկար: Եկէք  
այստեղ, սիրելի՛ Դելֆին, թող ձեր ա-

սածը լինի, ես ձեզ կ'ասեմ այդ գաղտնիքը:

Դեև, ինձ պէտքը չեն ձեր գաղտնիքները, ես իմոնքն ունեմ:

ԺՕՐ. Լաւ, ձեր գաղտնիքները յետոյ, իսկ իմս՝ այս լոռպէիս կը-յայտնեմ ձեզ: Լսեցէք, սիրելի Դելֆին, (Բոնում է նրան, որ միմիշ կամակորուելուց յետոյ, նստում է զանաւորակի վրայ ժօրժի կողին): Դելֆին, արդեօք իսկի չչք մտածում Սիմիի մասին...

Դեև. (Տեղից ցատկելով:) Սիմի, Սիմի... Ժօրժ, Սիմին կենդան է:

ԺՕՐ. Ի՞նչպէս կարողացաք այդպէս շուտով գլխի ընկնել, Դելֆին:

Դեև. Օ՛, Ժօրժ, սիրելիս, իմ անգին, այդ նմ էք: Սկեր հագած կոսջը լուսամտից հէնց նկատեցի թէ-չէ, իսկոյն մտքովս անցաւ, թէ նա Սիմին է. բայց յետոյ հասկացայ որ այդ անկարելի է:

ԺՕՐ. Ի՞նչու է անկարելի:

Դեև. Որովհետեւ... որովհետեւ... ամենքն էլ ասում են, թէ նա մեռել է: Այսօր ճիշտ վեց շաբաթ է նրա թա-

դումը... Իսկ այսօր նրանց պսակադրութեան օրն է, որ նրանք ամեն տարի տօնում էին:

ԺՕՐ. Այս, ճշմարիտ է:

Դեև. Միայն գիտէք ինչ, Ժօրժ, երբ այստեղ բերին նրա գիտքը, ես վախենում էի, սաստիկ վախենում, բայց կայնպէս ինձ ստիպեցի նայել վրան... Այդ Սիմին չէր, ոչ, ոչ, այդ նա չէր: Զեռքերից մէկը քիչ էր ալրուած, սակայն այդ ձեռքը Սիմիի փոքրիկ, գողտրիկ ու սիրուն ձեռքը չէր: Ալբերտօն այնպիսի յուսահատութեան մէջ էր, որ ոչինչ չէր կարող մտածել, թէպէտև կային լոռպէներ, երբ նա էլ էր կամկածում:

ԺՕՐ. Նրան հաղորդեցիք ձեր կասկածները:

Դեև. (Ժխուրու) Ո՛չ, Ժօրժ: Անհրաժեշտ էք, որ Ալբերտօն գոնէ Սիմիի գիտքը սպար: Ուստի ինքս ինձ ասացի՝ շատ հաւանական է, որ Սիմիի մընացորդները աւելի ևս կերպարանափոխուած լինէին և նրա գեղանի մարմնից կարող էին միայն ջարդուած ու քրքրուած կտորներ մնալ. ուրեմն թնդ

նա թաղի գրան, որին Սիմիկ տեղն է ընդունում: Բացի դրանից, ոչոք չեկաւ մեր ձեռքից առնելու այդ դիակը: Եւ վերջապէս ես կարող էի սխալ ուել:

ԺՕՐ. Դուք մի բարի և սիրելի աղջիկ էք. Սիմին կենդան է: Իսկ թէ ինչո՞ւ նա չի գալիս, դժբաղդութեան միջոցին ուր էք, ահա այդ էլ նրա գաղտնիքն է: Երբ յարմար ժամանակը գայ, նա ինքն անձամբ կը-պատմի Ալբերտօին այդ ամենը:

ԴԵԼ. Կը-նշանակի՞ Սիմին կը-գայ և կը-մնայ այսուեղ:

ԺՕՐ. Այդ ամենը կախուած կը-լինի նրա և Ալբերտօի խօսակցութիւնից: ԴԵԼ. (Յուանդով.) Ժօրժ, Սիմին պէտք է որ գայ և որքան կարելի է շուտ: Մենք ամենքս էլ երկիւղի մէջ ենք Ալբերտօի համար: Այս վեց շաբաթուայ մէջնա անձանաշելի է դարձել: մաղերը սպիտակել են, մէջքը կորացել, գիշերներն ամենելին քուն չունի. շարունակ ոգեհարցութեամբ է զբաղվում:

ԺՕՐ. Դեղին, տեսէք թէ ես ինչ

եմ մտածել. անհրաժեշտ է որ Սիմին երևայ նրան որպէս ողիութեամբ մասնաւութեամբ առաջ գործ կատար է նրան ասել այն ամենը, ինչ-որ իր սրտումը կայ: Իսկ թէ ինչպէս կ'ընդունի Ալբերտօն և ինչ պատասխան կը-տայ Սիմիկ այդ խոստովանութեանը, ահա այդ բանից կը-լինի կախուած այսուհետեւ երկուսի կեանքն էլ:

ԴԵԼ. Ես վախենում եմ, Ժօրժ:

ԺՕՐ. Այս, հնգիս. շատ հաւանական է որ երկուսի կեանքը ևս հէնց այդ խօսակցութիւնից լինի կախուած: Իսկ դուք ինչ կ'ասէք ինձ, Դեղին: (Բրոնելով նրա ձեռքի:) Հիմա՝ որ այլիս գաղտնիք չունեմ ձեզանից, ես ինչ-պէս զտնեմ դէպի սիրտդ տանող ճանապարհը:

ԴԵԼ. Ուրեմն երեկուայ կինը Սիմին էր: Ա.'ի, ինչպէս ցաւում եմ. ինչո՞ւ իսկոյն չվաղեցի պարտէզ՝ որ գրկէի ու համբուրէի նրան: Արդեօք նա դիտի, թէ ինչպէս եմ սիրում իրան:

ԺՕՐ. Գիտի:

ԴԵԼ. ՄԵՐ մասին, ԺՈՐԺ, յԵՄՈՅ  
ԿԸ-ԽՈՍԿՆՔ, ԵՐԲ տան մէջ առաջուայ  
ՆՄԱՆ ԽԱՂԱՊ, ԱՄԷՆ բան պարզ և ու-  
րախ կԸ-ԼԻՆԻ:

ԺՈՐ. ՅՈՒՅ ունէք որ յաջողուի:  
ԴԵԼ. Օ՛, այս ես ինքս էլ կ'աշխա-  
տեմ ձեզ օգնել:

ՀԱՅԵՑՆՈՒՄ կ զանգը, մՏԵՆՈՒՄ կ հՎՈՅԵՏը:

### S E U H L F

### ՆՐԱՆՔ ԵՒ ԻՎՈՆԵՏ

ԻՎ. ԴՌՈՒ կանչեցիք, օՐԻՈՐԴ:  
ԴԵԼ. ԱՅՌ, ԵԱ: Ասա, ԻՎՈՆԵԿՏ, այս  
ԵՐԵԿՈյ Ի՞նչ պատրաստութիւններ են  
տեսնվում այստեղ:

ԻՎ. Մարսափել՛ բաներ, օՐԻՈՐԴ:  
ՄԵՐ պարոնը (Մատով ցոյց տալով ճակա-  
սը:)... բո-լո-բո-վի՞ն: Ամբողջ գիշեր չի  
քնում, այլ նստում է ահա այստեղ,  
այս բազկաթոռի վրայ, (Ցոյց կ տալիս:)  
Ճրագները ճանգղնում, բացի այն (Ցոյց  
տալով: ) սիւնակի վրայի մուգ լուսամ-  
փոփով փոքրիկ լապտերից և սկսում է  
մտիկ տալ՝ աչքերը յառած այդ դու-

ՆԸ (Ցոյց կ տալիս սենեակների ներսերը  
տանող դուռը:) և ասում. «ՍԻՄԻ՛, արի»:  
ՄԷԼ անգամ պատշգամբի կողմից ծա-  
ծուկ մօտեցայ և նայեցի, օրիորդ,  
բայց այնպէս վախեցայ որ ամբողջ գի-  
շեր չկարողացայ քնել: Իսկ այսօր  
(Զայնը ցածրացնելով:) պարոնը հրա-  
մայել է բացի դօկտօր Պարիզօտից,  
ուրիշ ոչ-ոքի չընդունել: — «Այսօր, ա-  
սում է, ՍԻՄԻՆ անպատճառ կԸ-գայ, ո-  
րովհետեւ մեր պահադրութեան օրն է,  
իսկ նրա մահուան վեց շաբաթը հէնց  
այսօր լրացաւ»: Ինչպէս էլ կամենաք,  
օրիորդ, սակայն այսօր պէտք է փախ-  
չեմ տանից: Ո՛չ մէկ պայմանով չեմ հա-  
մաձայնիլ մնալ այսօր այսուեղ, եթէ  
նոյնիսկ տեղից էլ զրկուելու լինեմ:

ԴԵԼ. ԳԻՒԹԵՍ ինչ, ԻՎՈՆԵԿՏ. Եթէ  
դու այդպէս վախենում ես, ուրեմն  
հէնց այս բոպէիս փախիր, բանի դեռ  
պարոն Դ'Օբենասը չի եկել. նրան կ'ա-  
ռեմ՝ ես թոյլ տուի բեզ գնալու:

ԻՎ. ԱՌ, ՏԷՐԸ բարի տայ ձեզ, օրի-  
որդ. յատուկ շնորհակալ եմ: Ես հէնց  
հիմա, անմիջապէս կԸ-փախչեմ և կԸ-  
վերադառնամ միայն վաղը առաւօտեան:

Դել. Շատ լաւ, միայն-թէ շնորհ հետացիք. ինչոք պէտք է մենք քո փոխարէն կ'անենք։  
Ի՞նչ, Գնում եմ։

Գուրս է գնում։

### S E U H L Գ

Դելքին, ԺՕՐԺ և գօկտ. ԴԱՀԻԹՅՈՆ

ԴԱՀԻ. Փահ... ի՞նչպէս էլ ազատ էք ապրում, դաները կրնկի վրայ բաց, նախասենեակում ոչոք։

ԺՕՐ. Դօկուոր Դաւիթսօն... Այս ո՞ւ լսաչը բերաւ ձեզ այստեղ։

ԴԱՀԻ. Խաչը չէ, այլ երկաթուղին բերաւ մի քառորդ ժամ առաջ: Բարով ձեզ, թռչնակ, այ-թէ ուր էք եկել: Իսկ Ալբերտօն ի՞նչպէս է: Հենց-որ միտքս ընկաւ, թէ այսօր վեց շաբաթ է Սիմիի մահը, մտքովս անցաւ՝ որևէ բան չպատահի։

Դել. Այժմ ես գնամ... գեռ միքանի բան կայ պատրաստելու; Ցտեսութիւն, Ժօրժ, ցտեսութիւն, գօկտօր։

Գուրս է գնում։

### S E U H L Գ

Գօկտ. ԴԱՀԻԹՅՈՆ և ԺՕՐԺ

ԺՕՐ. Բայց Ալբերտօն ձեզ չէր սպառ սում, այլ գօկտօր Պարիզաին. այսօր ոգեհարցութեան մեծ փորձ են անելու երկուսով։

ԴԱՀԻ. Ե՞ն, բարեբաղզաբար, Ալբերտօն այլևս չի արժանանալ նրա տեսութեան: Հենց նոր մի նորութիւն իմացայ և եկայ որ Ալբերտօն հաղորդեմ: Այն խաբերան էլի յաջողեցրել էր՝ մի հարուստ կնոջ խելքից հանել, որի հետ և փախաւ գող շան պէս։

ԺՕՐ. Ա՛խ, այդ կանայք, որ ամեն շան ու գէլի ականչ են գնում... Սակայն ճշմարիտ էք ասում, գօկտօր։

ԴԱՀԻ. Այս Այժմ ամբողջ ժողովարանի խօսակցութեան նիւթը միմիայն այդ է: Գիտէք ինչ, այս բանի համար գուք պէտք է ուրախանաք, թէ-չէ ձեր եղբայրը կամ գերեզման կ'իջնէր շուտով և կամ կը-խելագարուեէր. սպիրիտական այդպիսի փորձերով չի կարելի անպատճե կատակ անել: Միքանի

օր առաջ ես տեսայ Ալբերտօխն...

ԺՕՐ. Յետոյ:

ԴԱՒ. Յետոյ այն՝ որ տաքութեան աստիճանը բարձրացած էր, աչքերն այրվում էին, իսկ ինքը բացի սպիրիտիզմից—ոգեհարցութիւնից էլ ուրիշ ոչ մէկ բանի մասին չէր խօսում: Անհրաժեշտ է այսօր նրան որևէ տեղ տանել և թոյլ չտալ որ մենակ մնայ:

ԺՕՐ. Դօկտօր, ես պէտք է հետդիսում և...մի գաղտնիք յայտնեմ ձեզ:

Ներս է մենում Դելֆինը:

### S E U H L E

### ՆՐԱՆՔ և ԴԵԼՖԻՆ

ԴԵԼ. Ժօրժ, ուր է հեծանիւս, ուշում եմ միքանի շրջան անել պարտէզում: Դուք հետո չէք գալ:

ԺՕՐ. Մենք երեքով միասին կ'երթանք, դօկտօրն էլ է գալու:

ԴԵԼ. Ի՞նչպէս. դօկտօրն էլ հեծանիւս:

ԴԱՒ. Ո՛չ, սիրելի թռչնակ, միք վա-

խենալ այդ գործիքի համար, ես դեռ չեմ վարակուել այդ ախտով, ես միայն մինչև պարտէզ կ'ուղեկցեմ ձեզ և կը նստեմ հովանոյում:

ԵՐԵՎՈՎ միասին գնում են այզի, Փօրձն ու Դելֆինը նեծանիւով: Մի բոպ-աշովի բեմը դատարկ է մեռմ, ապա ներս է մենում Դ'Օբենասը:

### S E U H L E

Դ'ՕԲ. (Մենակ. կանգ է առնում սեղակի մէջտեղը, մսի ետևից ընկած. վերցնում է զիլստրկը: Ձեռնոցները հանելով:) Զարմանալի է որ դօկտօր Պարիզուը մինչև հիմա չեկ սւ: (Նայում է ժամացոյցին:) Արդէն ուշ է, նա գիտի որ այսօր ես անպատճառ փորձ եմ անելու: (Ման է քալիս սենեակում, ապա կանգ առնելով՝ ձեռքը նակարին է տանում:) ... Ա՛յ, ինչպէս էր, երբ, շատ վաղուց, առաջին անգամ Սիմին երեւաց ինձ... Այդ բանը հէնց այս սենեակում պատահեց: Հովարդենը ինձ հրաւիրել էին՝ փորձին ներկայ լինելու... Սեղանը՝ ահա այստեղ էր դրուած. ես

Նստած էի այսպէս... (Նստում ե այն դրան դիմաց, որ սենեակների ներսերն ե տանըմ:) Եւ մէկէլ յանկարծ այստեղից երեաց Սիմին այդ դռան շէմքում... (Մասն է զալիս) Արդեօք այսօր կը-տեսնէմ նրան:

### Տ Ե Ս Ի Լ Է

#### ԴՕԲԵՆԱՍ և ԺՕՐՃ.

ԺՕՐ. Ալբերտօ, կարծեմ դու դոկտօր Պարիզօսին ես սպասում:

ԴՌ. Քեզ հիշ ասաց, դու մրտեղից գիտես:

ԺՕՐ. Նա ինքն ինձ ասաց. այսօր առաւոտեան տեսայ նրան:

ԴՌ. Այսօր... Ո՞րտեղ, այստեղ, եւ բաի երբ նա եկել է, ես տանը չեմ եւ դել:

ԺՕՐ. Ո՞չ, ես նրան քաղաքում տեսայ, կենդրոնական կայարանում:

ԴՌ. (Ցնցուելով,) Կայարանում:

ԺՕՐ. Այս, Ամերիկա էր զնում. նա ինձ խնդրեց քեզ ասելու...

ԴՌ. Գնում էր Ամերիկա... Անկա-

ըելի բան է. նա լաւ գիտի; թէ ինձ համար ինչ օր է այսօր:

ԺՕՐ. Նա ինձ խնդրեց քեզ յայտնեմ որ ոգիները հրամայել են իրան գընալ, իսկ քեզ մենակ թողնել այսօր:

ԴՌ. Այդ նմ խնդրեց որ ինձ ասես:

ԺՕՐ. Այս. Նա այն էլ ասաց; թէ այսօրուայ փորձիդ յաջողութիւնը բուլորովին մենակ լինելուցդ է կախուած:

ԴՌ. Եթէ նա այդպէս է ասել, ուրեմն այդպէս էլ պէտք է անել: Լսիր; Ժօրժ, ես վճռել եմ այսօր Սիմիին կանչել, Քիչ է մնում խելագարուեմ, երբ ինձ պատկերացնում եմ նրան կըակի մէջ, մենակ... անօգնական...

Ժօրժ, ես կամենում եմ իմանալ, թէ արդեօք ինձ չի անիծում Սիմին այն բանի համար որ թողի իրան առանց ինձ գնալու: Օ՛, եթէ-միայն նա երկար և ես կարողանայի նրան արտայացանել սէրս, իր համար քաշածս կարօտը... (Խորիրդաւոր կերպով;) Դու խօմ գիտես. մեր հարսանիքից առաջ, Հովարդենց մօտ, առաջին անգամ քեզ պատմեցի... Յիշնութ ես. ես նրան... տեսայ այստեղ:

ԺՕՐ. Հէնց այս սենեակնւմ:

Դ'ՕԲ. Այս... ԱՇ, այդ գուռը փակ  
էր և նա երեաց այն անկիւնից:

ԺՕՐ. Դոկտօր Պարիզօտը յոյս ունի  
որ դու կը-տեսնես նրան:

Դ'ՕԲ. Կը-տեսնեմ... Աստուած իմ,  
ինչպէս բարախում է սիրտս, ինչպէս  
սարսափելի է... Ուրեմն Ի՞րք սկսեմ  
փորձը:

ԺՕՐ. Դեռ գնա այգի, Ալբերտօ,  
այստեղ են նաև Դելֆինը և դոկտօր  
Դաւիթսոնը:

Դ'ՕԲ. Ինչո՞ւ է եկել նա:

ԺՕՐ. Հէնց այնպէս, մեր հարեան-  
ների մօսն է երել, ուզեցել է մեզ էլ  
այցելել: Գնա հետը տեսնուիր և ասա  
որ փափագում ես այսօր մենակ մնալ.  
իսկ այսուհետեւ կը-գաս այստեղ, դու-  
ռը կը-փակես և կ'անես այնպէս, ինչ-  
որ հարկաւոր է:

Դ'ՕԲ. Շնորհակալ եմ, ժօրժ, շնոր-  
հակալ եմ... Ինձ հանգստութիւն է  
հարկաւոր. ես շատ եմ յուզուած:

Գնում է այգի:

### Տ Ե Ս Ի Լ Ը

ԺՕՐԺ և ՍԻՄԻ

ԺՕՐ. (Ներսի սենեակները տանող դր-  
ուան շեմում կանչում է,) Սիմի, Սիմի...

ՍԻՄ. (Փուրս է գալիս, ամբողջովին  
սեւեր հագած, զիսարկով, քողը երեսին.)  
Ժօրժ, մենակ ենք:

ԺՕՐ. Այս, բայց կարճ միջոցով. Կէս  
ժամից յետոյ Ալբերտօն այստեղ կը-  
լինի: Արի այստեղ նստիր-հանգստա-  
ցիր, դու դրզում ես:

ՍԻՄ. Ա՛խ, Ժօրժ... (Նստում է:) Եթէ  
դու չկինէիր, ես երբէք չէի վճռիլ ոսքս  
ներս գնել այս շէմբից: Այստեղ ամեն  
բան իւրաքանչիւր անկիւն, ամեն մի  
առարկայ կորած անցեալս է յիշե-  
ցնում ինձ:

Թաշկինակը հանելով, զլուխը դնում  
է Ժօրժի ուսին եւ լաց լինում:

ԺՕՐ. Մի լար, Սիմի: (Շոյում է նրա  
զլուխը.) Հանգստացիր, սիրելի՝ քոյ-  
րիկս: Այժմ հասել է ժամանակը՝ ա-  
մեն-ինչ ուզգելու, դու պէտք է Ալբեր-  
տօն աղատես, ապա-թէ ոչ նա կո-  
րած է:

**ՍԻՄ.** (Բարձրացնելով գլուխը:) Զէ-  
որ նրա կորստեան պատճառը ես եմ,  
այլևս ի՞նչպէս կարող եմ ազատել նը-  
րան:

**ԺՈՐ.** Երկրիս երեսին միայն մահն  
է անուղղելի, արդէն ինքդ էլ տեսնում  
ես, թէ ինչ էր լինելու նրա դրու-  
թիւն, եթէ դու իրաւ մահացած լինէիր-  
այն-ժամանակ այլևս հչոք չէր կարող  
ազատել նրան: Դոկտօր Պարիկօտի նը-  
ման խարերաները տիրապետել են  
նրան. նա կամ կը-խելազարուէր և  
կամ ձեռք կը-բարձրացնէր իր վրայ:  
Բայց ճակատազիրը չկամեցաւ այդ.  
դու կենդան ես և միայն դու կարող  
ես ազատել նրան:

**ՍԻՄ.** Երբ յուսահատ դրութեանս  
մէջ վազեցի քեզ մօտ եկայ, աղաչելով՝  
միայն մի բանի մասին ինսդրեցի քե-  
զանից, այսինքն որ դու իմ մահից  
յետոյ, բոլոր ճշմարտութիւնն ասէիր  
նրան, գիտես որ սուտ չէի ասում. ես  
մահ էի ցանկանում: Բայց դու չթողիր  
խօսքս շարունակելու, այլ ասացիր՝  
ինքէ էլ պէտք է ուղղես արածդ չա-  
րիքը, դու պարտաւոր ես քաւելու

յանցանքու (Վեր է կենաւմ) Ահա, տես-  
նում ես, եկայ որ յանցանքս քաւեմ.  
ուստի պատրաստ եմ կատարելու ամեն  
բան, ինչ-որ դու կ'ասես: Իսկ յեսոյ,  
եթէ նա ինձ չների, ես արդէն բարոյ-  
ագէս ազատ լինելով՝ կարող եմ մեռ-  
նել:

**ԺՈՐ.** Այն, Սիմի, դու պէտք է նրան  
յայտնես ամեն բան, որից յետոյ միայն  
նա կամ քեզ կը-ների և կամ կը-դա-  
րարի այնպէս սաստիկ կերպով կա-  
րուող քաշելուց: Ամեն բան կախուած  
է նրա սիրոյ ոյժից:

**ՍԻՄ.** Բայց ի՞նչպէս գլուխ բերեմ  
այդ բանը: Եւ ես ի՞նչպէս անեմ որ  
նա անպատճառ ինձ լսի:

**ԺՈՐ.** Սիրելի Սիմի, չէ-որ դու մի  
անգամ արդէն երևացել ես նրան որ-  
պէս երևոյթ, հէնց այստեղ, այս միե-  
նոյն սենեակում:

**ՍԻՄ.** Օ՛, եղբայրս, երդվում եմ ա-  
զիդ արևովդ որ այդ մի կատակ էր...  
Այն-ժամանակ ես հիւր էի Հովարդենց  
մօտ: թէ նրանք և թէ դոկտօր Պարի-  
կօտը համոզեցին ինձ այս անկիւսից  
(Ցոյց տալով:) երևալ փորձի ժամանակ:

Մինչ այդ երբէք տեսած չէի Ալբերտօնն... Ուրախ էի գժութիւն անելու; Սակայն յետոյ երբ մենք ծանօթացանք, նա այդ գէպքին մի այնպիսի ահագին նշանակութիւն տուաւ որ ես քաջութիւն չունեցայ այդ կատակի մասին նրան բան ասել:

ԺՕԲ. Անհրաժեշտ է այսօր նոյնը կրկնել, դու նրան կերեաս էլի մի անգամ: Գնանք, ամեն բան քեզ կըպատմեմ... Շտապիր, Սիմի, ես լսում եմ նրա քայլերի ձայնը:

Խիմին դուրս է գնում ձախ կողմից:

### S E U H L θ.

#### ԺՕԲԺ և ԴՕԲԵՆԱՐ

ԴՕԲ. Ժօրժ, ինձ մենակ թող: Ես ինձ հաղիւ զսպեցի՝ դօկտօր Դաւիթսոնին մնաս-բարով ասելիս. նա ինձ հաւատացնում էր՝ որպէս-թէ հիւանդ եմ: Սակայն երբէք այնպէս առողջ չեմ եղած, ինչպէս-որ այսօր եմ: Ինձ թվում է որ՝ թէ լսողութիւնս, թէ

տեսողութիւնս այսօր առանձնապէս աւելի պարզ են ու աւելի մաքուր:

ԺՕԲ. Ալբերտօ, ես գնում եմ, միայն աղաչում եմ հանգստացիր. խօմ չի կարելի փորձն սկսել այդպէս վըրդովուած դրութեամբ: Բժիշկն ուղիղ է ասում. դու դողում ես:

ԴՕԲ. Անհամբեր սպասելուց է... նա գալու է... Ցտեսութիւն, Ժօրժ, շնուր դնա...:

ԺՕԲ. Ցտեսութիւն, Ալբերտօ:  
Դուրս է գնում:

### S E U H L θ

#### ԴՕԲԵՆԱՐ, մենակ. յետոյ. ՍԻՄԻ

ԴՕԲ. (Երբեմն ման է գալիս սենակում, երբեմն կանգ առնում:) Ո՞րպէս-թէ՝ ես տեսող ունեմ... Ողորմելի՛ մարդիկ... դուք ամեն բան մարմնին էք վերագրում... Հոգիս այրվում, կրծքից դուրս թռչել է ուղում... զգում. եմ որ մօտենում եմ անդը-գերեզմանեան սարսափելի գաղտնիքին, իսկ նրանք առում են՝ հանգիստ եղիր: Սիմի, Սիմի,

այսօր դաւ անպատճառ պէտք է երեւաս ինձ: Ո՞հ, Ի՞նչպէս ուժասպառ եմ եղել առանց քեզ: (Հանգընում է բայոր նրագները եւ բողնում միայն անկիւնում դրուած սիւնակի վրայի կարմրագոյն լուսամփոփով լապտերը:) Ահա այդպէս... Ի՞նչպիսի խաղաղութիւն է ախոռում շուրջա, պարզ լսում եմ պրախ բարախումբը: (Նստում է եւ ձեռքերով ծածկում երեսը:) Գլուխս այրվում է: (Վեր է կենում եւ ձեռքերը՝ դեպի սենեակների ներսը տանող դուռը պարզում:) Սիմի, Եկ... երևա ինձ. ես պէտք է քեզ տեսնեմ և հետդ խօսեմ: (Լուսամից ներս է բափանցում լուսնի տողը:) Սիմի, արդեօք այստեղ ես: (Դուների ետեւից լսվում է մի հարուած:) Այստեղ է... Ո՞վ Սստուած, նա այստեղ է... Արդեօք պիտի խօսիս հետո: (Լավում է երկու հարուած:) Խօսելու է... Սիմի, ամուսնու իշխանութեամբ, սիրոյս զօրութիւնով երդուեցնում եմ քեզ... երևա ինձ, (Դուռը կամաց բացվում է, շեմիք վրայ երեւում է Սիմին՝ ոսկից մինչեւ գրուի ամբողջապահ սիաթակ քոյով ծածկուած եւ չափազանց

դժգոյն:.) Սիմի, Սիմի, այդ դժւ ես... (Ուզում է զեալի նրան զնալը բայց նա ձեռքի նշանով չի բողնում:) Ներիք, Սիմի, տեղիցս չեմ շարժուելու միայն աղաջում եմ պատասխանիր: Ասա ինձ, Սիմի, դու շատ տանջուեցիր: (Սիմին զիսով է անում:) Ասում ես՝ այս... Օ՛, իմ խեղճ Սիմի: (Դարձեալ ուզաւմ է դեպի նրան գնալը, բայց նա խվարն մի քայլ է զնում:) Սիմի... մի գնար... այլս տեղիցս... չեմ շարժուել: Սիմի, հիմա իմացմբ, թէ ի՞նչպէս եմ սիրում քեզ:

ԱհՄ, Այն:

Դ'ՕԲ. Դու խօսում ես... Դու խօսում ես... ես լսեցի՝ այս: (Յաղթական կերպով:) Կը-նշանակի՝ այս աշխարհը մատչելի է մեզ..., Սէրը յազդում է մահուան... Օ՛, Սիմի, ներիք ինձ որ սասն էի վերաբերվում քեզ, որ քեզ թողի մենակ գնալու, դու կորար սարսափելի տանջանքների մէջ, բայց հիմա կարող եմ քեզ ասել՝ որ կաթիւ-կաթիւ ամբազջ արինս կը-պալի, եթէ-միայն քեզ նորից կենդանացնելու կրջանկութիւնն ունենայի..., նայն տե-

սակ սարսափելի մահուան բոլոր տաճա-  
ջանքները կը-տաճնէի, միայն-թէ բեղ  
վերադարձնել կարողանացի...

ՍիՄ. Հարկաւոր չէ... Մոռացիք Սի-  
մին... Նա արժանի չէ այդպիսի  
բուռն սիրոյ...

Դ'ՕԲ. Ինչ սասացիք... արժանի չէ...  
Զեմ հասկանում:

ՍիՄ. (Հեկեկանքը զնպելով.) Սի-  
մին... սարսափելի մահի է արժանի.  
Նա քեզ խարեց...

Ուզում է գնալ:

Դ'ՕԲ. Մի գնար... Երգուեցնում եմ  
քեզ՝ մի զնար: Սիմին չէր կարող ինձ  
խարել... Ես սխալ լսեցի:

ՍիՄ. Ո՛չ, նա քեզ խարեց: Եթէ նա  
չմեռնէր, քեզ կը-խայտառակէր և դու  
ինք երես կը-թերէիր նրանից:

Դ'ՕԲ. (Աղաղակում է օձից խայր-  
ուածի նման:) Խարեց... ինձ թողեց-  
գնաց... Ահա-թէ ինչ է անդր-գերեզ-  
մանեան գաղտնիքը, որ դու հետդ  
տարար:

ՍիՄ. Ալբերտօ, Սիմին չգիտէր որ  
դու սիրում ես իրան. քո ինքնազըս-  
պութիւնը նա սառնութեան տեղ էր

Ընդունում, իսկ զիջումներդ՝ ան-  
տարբերութեան տեղ: Նա տաճնջվում  
էր, նա ծարաւի էր բուռն, քնքուշ սի-  
րոյ և... խորտակեց իրան...

Դ'ՕԲ. Ո՞վ էր նրա սիրեկանը...  
(Սիմին լուս է.) Ի՞նչպէս, ուրեմն դու  
միայն նրա համար երևացիր ինձ, որ-  
պէսզի գանակը նմորից մխէիր կրծքիս  
մէջ: Դու մի այդպիսի սարսափելի  
գաղտնիք յայտնեցիր ինձ և հրմա ու-  
զում ես փախչէմ իմ վրէժխնդրութիւ-  
նից: Ուզում ես հեռանաս և հետդ տա-  
նես այն անարդ մարդու անունը, որ  
այդպէս սոսկալի կերպով անպատճել  
է ինձ... Եւ միթէ սրանից յետոյ կա-  
րելի է ապրել... (Սիմին ուզում է զը-  
նալ:) Սպասիք, մի հեռանար... Կարե-  
լի է դա... ո, որպիսի կասկած, ժօրժը...

ՍիՄ. Լոիր, Ժօրժն ազնիւ է... Դա  
Ստօնձան էր:

Դ'ՕԲ. Ստօնձան... (Բոնելով կուրծքը:)  
Ստօնձան... Նա զնաց իր հայրենիք և  
ես անկարող եմ ոտնատակ տուած  
պատուիս համար վրէժխնդիր լինել...  
Օ՛, Աստուած, Աստուած, ինչպէս  
տաճնջվում եմ ես...



ՍիՄ. Օ՛, և ի՞նչպէս տանջվում էր Սիմին։ Ազատ, բոլորովին թողնուած իր կամքին, նա հաւատաց սիրուն հրապուրողի խարդախ ու շողոքորթ խօսքերին։ Քո առերևոյթ սառնութիւնից Սիմին բոլորովին մենակ էր զգում իրան, իսկ նրա անազնիւ ընկերունին՝ Թեկզին շարունակ այն էր պնդում, թէ ամուսինը չի սիրում նրան։ Եւ... Սիմին ընկաւ... Բայց և տարաւ բոլոր սարսափները... ենթարկուեց ամեն տեսակ ստորացումների... Իմանալ՝ որ Ստօնձան սիրում էր ոչ-թէ Սիմին, այլ միայն նրան հարսաւութիւնը, որ նա կամենում էր Սիմին ամուսնուց բաժանել՝ միմիայն նրա փողերը ձեռք զցելու յուսով... Եւ Սիմին մեռաւ անպատուած, խարուած, ստորացած, լքուած։ Սիմին միայն մահից յետոյ իմացաւ, թէ ի՞նչպէս էր սիրուած իր ամուսնուց։ Սիմիի հոգին սարսափելի կերպով տանջվում է... նա հանգստութիւն չունի։ Ես եկայ խնդրելու քեզանից... որ ներես նրան։ Ների՛ և հանգստութիւն տուր նրան։

Հեկեկում է։

Դ'ՕԲ. (Հանգիստ) Դու լաց ես լինում. Այդ Սիմիի հոգին է հեկեկում... Խարուած, լքուած... և դա Սիմի...  
ՍիՄ. Տեսնում ես, թէ ի՞նչպէսի բաղդաւորութիւն էր նրա մահը... Զիսրու գու չէիր կարող նրան ներել։

Դ'ՕԲ. Ների՛լ... ծանր է... ծանր... Բայց գու տանջուեցիր, մեռար մարտիրոսական մահով... Ես ներում եմ Սիմիի հոգուն։

ՍիՄ. (Կամաց-կամաց ետ-ետ է զնում.) Դու ներում ես մահացածին, բայց երբէք չէիր ներիլ կենդան Սիմիին։  
Ուզում է զնալ։

Դ'ՕԲ. Մի հեռանար։ Թող մի վերջին անգամ էլ նայեմ վրադ... Սիմի, այլ ես երբէք քեզ չեմ տեսնելու... Ի՞նչպէս սիրում եմ քեզ... ի՞նչպէս սիրում եմ քեզ...  
ՍիՄ. Սիրում ես... Օ՛, եթէ Սիմին կարողանար կենդանանալ... ի՞նչպիսի սիրով կը-շըապատէր քեզ։ Նրա կեանքի իւրաքանչիւր ժամը, նրա սըրտի ամեն մի տրոփիւնը՝ քեզ, միմիայն քեզ կը-լինէր նուիրուած։ Սիրոյ ի՞նչպիսի գանձ կայ թագնուած Սիմիի

սրտի մէջ. նա ամեն ճիգն կը-թափէր,  
որպէսզի կարողանար մոռացնել տալ  
քեզ իր կարձառօտ՝ ինչպէս երազ րո-  
պէական մոլորութիւնը: Օ՛, եթէ-միայն  
կարողանայիր ներել նրան...

Դ'ՕԲ. Նորից գրկել Սիմիս, կըրծ-  
քիս սեղմել և զգալ, թէ ինչպէս բա-  
րախում է նրա սրտիկը... Օ՛, ես ամեն  
բան կը-ներէի, ամեն բան կը-մոռա-  
սայի, միայն-թէ կարողանայի վերա-  
դարձնել նրան... (Նստամ եւ ձեռքե-  
րով ծածկում երեսը.)

ՍԻՄ. (Արդեն շկսում:) Ալբերտօ,  
Ալբերտօ, ուրեմն գու ներում ես Սի-  
միս:

Դ'ՕԲ. Ներում եմ... Ներում եմ և  
ստոնում այն մտքից, որ երբէք չպէտք  
է կարողանամ նրան ասել ներում և  
սիրում եմ...

ՍԻՄ. Ալբերտօ, Ալբերտօ...

Դ'ՕԲ. (Բազկարութից վեր ցատկելով:) Ի՞նչ եմ լսում... Միքիչ առաջուան  
ձայնը չէր այդ... այդ Սիմիս սեպհա-  
կան ձայնն է... Միմիս կենդան է և  
կանչում է ինձ:

Գնում եւ դէպի Սիմիս:

ՍԻՄ. (Քօղը վերցնելով գլխի վրայ-  
ից:) Ալբերտօ, ես եմ—քո Սիմիս... Նե-  
րիր, ներիր ինձ...

Դ'ՕԲ. Կենդան է... կենդան է...  
(Համբոյրենով ծածկում է երա երեսը,  
կարողին կերպով իր երեսին է խում երա  
ձեռքերը, մազերը:) Միմի, իմս Սիմի...  
Ներում եմ քեզ և ամեն բան մոռա-  
սում... Կենդան է... Ալբերտօ կենդան է...



ԷՄ ԹԱՐՄԻՄԱՆՅԱԹԵԱԱՄ ԵՎ ՓԱԽԱԳՐՈՒ-  
ԹԵԱԱՐՅԻ ԼԱՅԱ ԵՎ ՏԵՍԱՅ,

1. **Փայտառէն խոճքից մինչեւ սպի-  
սակ-սաւնը, պատկերազարդ, ա-  
մեն հասակի համար (սպառուած):**
2. **Յեթիտօք գիւցազն, պատկեր, ա-  
մեն հասակի համար (սպառուած):**
3. **Աչբացար և նրանից  
եեռու մինալու միջոց-** Հրատ. հանգ.  
Ենթ, զինուորն. համար  
**ներ, զինուորն. համար** գնդ. Աղեք-  
(սպառուած):  
**4. Զինական եղինջի մշա-  
կուրիւնը (սպառուած):** Հայկազեա-  
նի:
5. **Բարկացաւ բռնախա (Հրատ. Կով.  
Կայս. Բժ. Ընկերութեան):**
6. **Երեխ վկավիկ, ա. Մայրական սիրտ,  
բ. Առանձին, գ. Վրէժ, երիտա-  
սարդների համար (սպառուած):**
7. **Գիւցական փարմուկի, ժողովր-  
դական, զինն է . . . . .** 25 կ.
8. **Աներեւոյր հողազոր, ըստ Զ.**  
**Դարվինի, պատկերազարդ, ամեն  
հասակի համար . . . . .** 7 կ.
9. **Արէժ, Գի զը-Մօպասանի, և Հի-  
ւանդապան աղջիկը, Ֆր. Կոպ-  
պէի, ժողովրդական . . . . .** 5 կ.
10. **Երկրաշար եւ երաբդիսալին  
լիսներ, ժողովրդական . . . . .** 10 կ.
11. **Շնի եւ ձուի օրս, մանկական . . .** 5 կ.

12. Անգարդ Հանեսը	մանկա-	40 կ.
13. Կարեն ու Մանենը	կան. բո-	40 կ.
14. Եօրի ազռաւ	լորն էլ	40 կ.
15. Պատիկ ու Ճատիկ	քեղ պատ-	40 կ.
16. Խմբաղին, պատկերագարդ, ամեն	կերներով	40 կ.
հասակի համար . . . . .		50 կ.
17. Թզնատիս Լոյօլա, (իր պատկե-		
րով), ժողովրդական . . . . .		30 կ.
18. Վարժապետ, ժողովրդական (սոլ.):		
19. Տրիլի, դրամա 4 արարուածով .		25 կ.
20. Ռզենացուրին, թատերդ, 3 ա-		
րարուածով . . . . .		50 կ.
21. Ասաշին վասակի, զրոյց,		
պատկերագարդ . . . . .		60 կ.
22. Փոքրիկ Յոլակին ու Խլը-		
տիկ նապասակը, զրոյց,		
պատկերագարդ . . . . .		1 ռ.—
23. Նապատակ Խէչանի վրձ-		
խնդրուրիւնը կամ Ի՞նքն		
ինք օգնիր, զրոյց, պատ.		75 կ.

Վերոյիշենոյ գրեթեց ձեռք բերելու համար պէտք  
է դիմել՝ Թիմիկ, «ԳՈՒՇՏԵՐՔԵՐԴ» գրախնա-  
ռանոց, կամ ինձ՝ Օրբելիանովսկայ ոլ. № 24.

Լևոն Վարդան Մելիք-Ադամյան

500

ՀՀ Ազգային գրադարան



NL0312291

7213